

188/125

A 201.

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱԿՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐ ԱՍԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

~~188~~

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Մ Ա Ս Ա.

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ



1. 4/2017

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ Ա Ս

ԴԱՍԱԳԻՐՔ՝ ՅՈԹՆԱՄՅԱ, II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒ ՑԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ
ՑԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ ՀՍ.ԲՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. — ՅԵՐԵՎԱՆ. 1927

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Այս գրքի Ա. և Բ. մասն ել I աստիճանի դպրոցներում վատարվող լեզվական գործնական աշխատանքների ամփոփումն են՝ վորոշ սիստեմի վերածված, և II աստիճանի դպրոցների ստորին խմբերի դասատուների համար ծառայելու յեն իբրև ուղեցույց: Յերկու գիրքն ել գործնական նպատակ են հետամտում— աշակերտներին դիտել տալ այս կամ այն լեզվական յերևույթը և այդ դիտողություններից հանած յեզրակացություններով յուրացնել տալ՝ հայոց լեզվի ուղղագրությունը, կետադրությունն ու, վորոշ չափով, վոճը: Հետևապես, միանգամայն խուսափելով դոգմատիզմից ու քերականությանն առաքկայական բնույթ տալուց, լեզվական վոչ մի կանոն կամ վորոշում ուսուցիչը պատրաստի չպետք է տա աշակերտներին. այդ կանոններն ու վորոշումներն աշակերտների դիտողությամբ ու բանաձևումով պիտի յերևան գան: Ինքնուրույն դիտողությունն ու բանաձևումը զարգացնում են աշակերտի ակտիվությունը, հետաքրքրություն են առաջ բերում նրա մեջ, բարձրացնում նրա յեռանդը և արդյունքն ամրապնդում աշակերտի հիշողության մեջ:

Այս կամ այն դասի նյութ դարձած հողվածում վորևե նպատակ իրեն վորոշակի առաջադրելով, դասատուն առաջադրած նպատակին համապատասխան հատված պիտի ընտրի այդ հողվածից (կարելի յե նաև այս գրքի I մասի առաջադրություններից) և, աշակերտների ուղադրությունն իր առաջադրության վրա հրավիրելու համար, կենդանի զրույց ստեղծի նրանց հետ՝ հարց ու պատասխանի միջոցով, ընդ վորում, ուսուցչի հարցերը պիտի լինեն մտածված, հասկանալի ու վորոշ և համապատասխանեն այս կամ այն խմբի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին: Այսպես կոչված՝ հուշող հարցերից, հնարավոր չափով, պետք է խուսափել:



11-24492 գր

Վորոշ նպատակով առաջարկած հարցերից հետո պետք է անցնել նրանցից բոլորը. յեզրակացութեան, վոր աշակերտներն իրենք պիտի հանեն: Ուսուցիչը շատ ել խստապահանջ չպիտի լինի կանոնների ու վորոշումների բանաձևումների բառացի ճշտութեան նկատմամբ, քանի վոր, առհասարակ, նման աշխատանքները գծվարին են, սակայն, ուսուցիչը պետք է հետևի, վոր բանաձևումների մեջ մտքի սխալներ չլինեն: Վորովհետև բանաձևումը հետևանք է վոր միայն յուրացման, այլև ստեղծագործութեան, սինթեզի, իսկ աշակերտութեան վոր բոլորի մեջ են զարգացած լինում այդ ունակութիւնները, ուստի դասատուն պետք է աշխատի առաջ քաշել այդ ունակութիւնների տեսակետից պակաս զարգացածներին:

Հատվածը դիտելով ու յեզրակացութիւն հանելով՝ ամեն ինչ չպիտի վերջանա. ամենակարևորը—գործնականը դեռ մնում է: Բավական չէ, վոր աշակերտը կանոններ կամ վորոշումներ յեզրակացնի, բանաձևի և իմանա. նա պետք է կարողանա այդ կանոնները գործնականորեն կիրարկել: Ահա այդ նպատակով, դասատուն աշակերտներին գործնական աշխատանքներ պիտի առաջադրի, վորոնց կատարումից արդեն կերևա, թե աշակերտութիւնը կամ անհատ աշակերտն ինչ չափով են յուրացրել լեզվական այս կամ այն կանոնը:

Այս գրքերում այդպիսի գործնական աշխատանքների համար բավական թիվով վարժութիւններ են առաջադրված. դասատուն կարող է նման հատվածներ վորոնել և լեզվի դասագրքում:

Հատկապես ուղղագրութեան ուսուցման նպատակով տրվող գործնական աշխատանքների նպատակահարմարութեան համար հանձնարարվում է կարգալ Գ. Նդիլյանի նոր կազմած «Ուղղագրութեան ուսուցման մեթոդիկան»:

Ավելորդ էմ համարել, շատ սակավ բացառութեամբ, հարցեր դնել աշխատանքների համար, նախ՝ գրքի ծավալը չմեծացնելու նպատակով, յերկրորդ՝ ընդունելով, վոր ինքնին հասկանալի կլինի, թե ուսուցիչն ինչ հարցեր պիտի տա, քանի վոր նա նախորոք ծանոթ պիտի լինի յուրաքանչյուր վարժութեան հաջորդող կանոնին կամ վորոշման (սահմանման), վորոնք ինքնին նշում են լեզվի դիտելիք յերևույթը, վորից և, բնականորեն, ծագում են հարցերը:

Քերականական վորոշ խնդիրներ մանրամասնորեն են դրված, հատկապես դասատուների համար: Առհասարակ, աշակերտ-

ներին միայն վորոշ նպատակով տրված հատվածիկները պետք է դիտել տալ ու գործնական աշխատանքներ առաջադրել այս գրքերի Ա. մասից: Բ. մասն աշակերտների ձեռքը չպետք է տալ,—այդ մասը կազմված է սոսկ իբրև ուղեցույց դասատուների համար:

Հարկ էմ համարում հայտնել, վոր այս գրքերի տեսական մասի համար աղբյուր են ծառայել Մ. Աբեղյանի կազմած քերականութեան դասագրքերը: Որինակներն ու վարժութիւններն ինքս եմ կազմել, կամ հայոց լեզվի համապատասխան տարվա դասագրքից վերցրել:

ՀԱՐ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

I. ԲԱՌ, ՀՆՁՅՈՒՆ, ՎԱՆԿ, ՏԱՌ

§ 1. Աշակերտ, դպրոց, գիրք, սպիտակ, գնալ, դու, հիմա, ախ, — սրանք բառեր են:

ՎՈՐՈՇՈՒՄ 1. Ամեն մի բառ ունի վորեվե նշանակութիւն կամ իմաստ, նայած ի՛նչպես ենք գործածում:

§ 2. Գ-ի-ր-ք, — սրանք գիրք բառի ամենապարզ բաղադրիչ մասերը կամ հնչյուններն են:

ՎՈՐՈՇՈՒՄ 2. Հնչյունները պարզ ծայներ են յեվ բաղադրիչ մասերի չեն վերլուծվում:

§ 3. Ա-շա-կերտ, դա-սա-րան, կար-դալ, — այս բառերը գծիկներով վանկերի չեն բաժանված:

ՎՈՐՈՇՈՒՄ 3. Վանկ կոչվում է բառի այն մասը, վոր մի անընդհատ շնչով ենք արտասանում:

§ 4. Ա-սա, ա-րի, Ե-մին, Ե-գուց, ի-ջով, ի-մաս-տուն, ու-րախ, ու-տել: — Այս բառերի վանկերի բաժանումից յերևում է, վոր կան հնչյուններ, վորոնք մենակ վանկ են կազմում, և կան հնչյուններ, վորոնք մենակ վանկ կազմել չեն կարող:

ՎՈՐՈՇՈՒՄ 4. Այն հնչյունները, վորոնք մենակ կարող են վանկ կազմել, կոչվում են ձայնավոր հնչյուններ. դրանք են՝ ա, ե, ը, ի, օ, ու:

ՎՈՐՈՇՈՒՄ 5. Այն հնչյունները, վորոնք մենակ չեն կարող վանկ կազմել, կոչվում են բաղաձայն հնչյուններ: Բաղաձայն հնչյունները ձայնավորների հետ միանալով միայն կարող են վանկ կազմել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Վորոշեցե՛ք հնչյունների թիվը հետեվյալ հատվածի բառերի մեջ (որինակ՝ դուք=3, զոհվեցիք=8 և այլն):

Գուք զոհվեցիք պայքարի մեջ որհասական,
անշահ սիրով ժողովրդի գործի համար.
Ինչ ունեյիք՝ դուք բոլորը ավիք նրան,—
նրա պատվին, նրա կյանքին, ազատության:
(Կարմիր Արև, «ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Հետեվյալ հատվածի բառերի մեջ ձայնավոր հնչյունների տակը գծեցե՛ք:

Այսոր ցնծում ենք մենք,
այսոր ցնցում ենք մենք
աշխարհը հիմքից:
Հնկտեմբեր, մենք քո յերգն ենք,
Հնկտեմբեր, բռունցքված հին կյանքի դեմ:
(Կարմիր Արև, «ՀՈԿՏԵՄԲԵՐՄԱՍՆ»):

ՎՈՐՈՇՈՒՄ 6. Հնչյունների պատկերները կոչվում են **սառեր**: Հնչյուններն արտասանվում են, իսկ տառերը գրվում: Տառերը գրությունում լինում են՝ **փոփոխառ** յեվ **մեծասառ**:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. ա) Կազմեցե՛ք ձեր խմբի աշակերտների՝ անունների, հայրանունների, ազգանունների ցուցակը:

բ) Գրեցե՛ք ձեր իմացած գյուղերի, քաղաքների, յերկրրների, գետերի, լճերի, ծովերի, կղզիների, լեռների անունները:

գ) Գրեցե՛ք ձեզ հայտնի հիմնարկների, լրագրերի, հանդեսների, զրքերի անունները:

ՎՈՐՈՇՈՒՄ 7. Մարդկանց, քաղաքների, գյուղերի, յերկրների յեվ այլ աշխարհագրական անուններ, այլև գրքերի, լրագրերի, հիմնարկների յեվ այլն հասուկ սնունդներ մեծասառ են գրվում:

II. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 5. ՎՈՐՈՇՈՒՄ 8. Յերկու ձայնավորի միացած արտասանությունը մի շնչով՝ կոչվում է **յերկբարբառ**: Յերկբարբառի ձայնավորներից մեկը պահում է իր ձայնավոր հատկությունը, իսկ մյուսը՝ բաղաձայնի պաշտոն է կատարում յեվ կոչվում է **կիսաձայն**: Հայոց լեզվի մեջ կիսաձայն է յ հնչյունը, վոր, միանալով ձայնավորների հետ սկզբից կամ վերջից, զանազան յերկբարբառներ է կազմում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Հետեվյալ բառերի մեջ ընդգծեցե՛ք յերկբարբառները.

1. Պայծառ, գուհն, գյուղ, հույս, մըջուն, յերագ, յերկաթ, յերկաջն, արյուն, հյուսիս, հյութ, խոյ, բույս, շշնջուն, յոթ, վկայական, սենյակ, աղբյուր, աղյուսակ, հույն, փայտյա, արդոք, Նյու-Յորք:

2. Ո՛, կույր ե նա, ով չի տեսնում
յերկինք հասած կրակը թեթ.
յեկեք, յեկեք, ով սիրա ունի՝
վողջակիզվող ու հրակեզ:

Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ
քո վոսկի հրում,
բայց վառվի պիտի սիրտս մոխրացած՝
քո բոլոր գալիք արշալույսներում...
(Կարմիր Արև, «Ո՛, ԿՈՒՅՐ Ե ՆԱ»)

§ 6. Նայել, վկայել, կայարան, քաղաքային, հոռոյական, եյակ, եյի, եյություն, շոյել, գոյություն, ձիավոր, միակ, թիակ, Ասիա, Գաբրիել, որիորդ:

ԿԱՆՈՆ 1. ա) ա, ե, ո ձայնավորներին մի այլ ձայնավոր հաջորդելու դեպքում՝ յերկու ձայնավորների մեջ մտնում է յ կիսաձայնը իբրեվ ձայնակապ:

բ) ի ձայնավորին այլ ձայնավոր հաջորդելու դեպքում՝ յ ձայնակապը չի մտնում:

§ 7. Սկիզբ, սկսել, սպասել, սպասավոր, ստանալ, ստորագրել, սթափվել, զգալ, զըռնել:

ԿԱՆՈՆ 2. Սկ, սպ, us, սք, գբ, զգ սկսվող բառերի սկզբում կարճ ը ե լսվում, բայց չի գրվում:

§ 8. Դասընկեր, նախընթաց, գուգընթաց, վերընտրել, պուրըմբունելի, նորընտիր, հյուրընկալ, գրել, ջրել, զրկվել, բժիշկ, մկրատ, նկար, դմակ:

ԿԱՆՈՆ 3. Բարդ բառերի մեջ, յերբ յերկրորդ բառն սկսվում ե ը-ով, այդ ը-ն պետք ե գրել: Մնացած դեպքերում ը-ն կարող ե լսվել, բայց չգրվել:

§ 9. Արամը գնաց. Արամը կարգում ե. Արամը տեսավ. Արամն ասաց, Արամն ընկավ, Արամն իջավ, Արամն ուտում ե, Արամն սկսեց, Արամն զգաց:

ԿԱՆՈՆ 4. Բառավերջի ը ձայնավորը և-ի յե փոխվում, յերբ հաջորդ բառը ձայնավորով կամ սկ, սպ, սք, us, զգ, գբ-ով ե սկսվում:

§ 10. Գը-րեց, զըր-կանք, մը-նաց, քաղ-ցըր, բար-ձրը, Մը-կըր-տիչ, դըպ-րոց, գըգ-գը-գել, ըս-կիզբ, ըգ-բոս-նել:

ՎՈՐՈՇՈՒՄ 9. Գրելիս, տողի վերջում բառը չտեղավորվելու դեպքում, տողադարձ ենք անում:

ԿԱՆՈՆ 5. Տողադարձի ժամանակ բառը պետք ե կանոնավոր վանկերի բաժանել կամ ճեգել:

ԿԱՆՈՆ 6. Տողադարձի ժամանակ յերկու ձայնավորի միջեվ գտնվող մեկ բաղաձայնը հաջորդ վանկն ե անցնում (ա-սա, ա-րի, գա-զան):

ԿԱՆՈՆ 7. Յերկու բաղաձայնից մեկը նախորդ վանկում ե մնում, մյուսը հաջորդ վանկն ե անցնում (ապ-րի, ար-ձան, Գաս-պար):

ԿԱՆՈՆ 8. Յերեք բաղաձայնից յերկուսը նախորդ վանկում են մնում, իսկ յերրորդը հաջորդ վանկն ե անցնում (մարդ-կանց, գարթ-նել, փըրկ-վել, ջարդ-վել):

ԿԱՆՈՆ 9. Թե տողի վերջը մնացած յեվ թե հաջորդ տողն անցած վանկերի մեջ լսվող ը-ն գրվում ե (գը-րել, բը-ժըլ-կի, ըգ-գալ):

ԿԱՆՈՆ 10. Յեթե բարդ բառի յերկրորդ մասն ավորջուծյամբ տակի տողն ե անցնում, ը տառը չի գրվում (դաս-ագրքի, լրա-գրի, կարմրա-գրոջ):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Հետեվյալ բառերը գծիկներով բաժանեցե՛ք վանկերի յեվ դիմացը գրեցե՛ք՝ քանի՛ վանկ ե. որինակ՝ դա-սա-րան=3 վ.:

1) Տետրակ, քաղաք, կարմիր, բաժակ, դանակ, յերե-խա, ճանապարհորդ, յերիտասարդ, բժիշկ, գրիչ, դոնա-պան, մարդկութուն, գործնական, յերգիչ, սանր, թանձր, զգալ, սպասել, ստանալ, բարութուն, հիանալի, գոլու-թյուն, միակ, թևավոր, սևանալ, հյուժառատ, սենյակ:

2) Հին, հաստաբուն խաղողենիների մեջ թագնված վաճառատան դռների առաջ, խաղողաթուփերի, շերեփուկի ե չինական մանր վարդերի ցանցապատ ծածկոցի հովանու տակ, սեղանի մոտ, գինու շիշն առաջներին, նստած ելին ներկարար Վինչեցոն ե փականագործ Ջիովաննին:

(Կարմիր Արև, «Հեֆիսթ»)

III. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

(Պարզ, բարդ, անանցավոր.—արմատ, նախածանց, վերջածանց)

§ 11. Հող, գործ—հող-ա-գործ. նավ, պետ—նավ-ա-պետ. քար, ժայռ—քար-ա-ժայռ. լուր, գիր—լր-ա-գիր. տիպ, գիր—տպ-ա-գիր. լույս, նկար—լուս-ա-նկար. բույս, կեր—բուս-ա-կեր. մատչան, դարան—մատեն-ա-դարան. ատչան, կալ—ատեն-ա-կալ. մատչան, գիր—մատեն-ա-գիր. վեպ, գիր. վիպ-ա-գիր. սեր, տենչ—սիր-ա-տենչ. կես, բաց—կիս-ա-բաց. բժիշկ, պետ—բժշկ-ա-պետ. ամիս, վերջ—ամս-ա-վերջ. լուծ, կից—լծ-ա-կից. լուր, գիր, վա-

ճառ—լր-ա-գր-ա-վաճառ. մատչան, դարան, պետ—մատեն-
ա-դարան-ա-պետ. աշխարհ, գիր, գետ—աշխարհ-ա-գր-ա-
գետ. հեռու, գիր, տուն—հեռ-ա-գր-ա-տուն. գինի, գործ—
—գինե-գործ. վոսկի, գոծ—վոսկե-գոծ. վորդի, սեր—վոր-
դե-սեր. տարի, մուտ—տարե-մուտ: Ջուր, աղաց—ջր-ա-
ղաց. աղբ, անուն—ազգ-անուն. յերկաթ, ուղի—յերկաթ-
ուղի:

ՎՈՐՈՇՈՒՄ 10. Բարդ կոչվում են այն բառերը, վո-
րոնք կազմված են յերկու կամ ավելի բառից:

10. Բարդ բառի գլխավոր իմաստը յերկրորդ մասի
մեջ է գտնվում:

ԿԱՆՈՆ 11. Բարդ բառերը կապվում են ա հոդակա-
պով (դաս-ա-գիրք):

ԿԱՆՈՆ 12. Բարդ բառի յերկրորդ մասը ճանաչվորով
սկսվելու դեպքում՝ ա հոդակապը չի դրվում (դաս-ընկեր):

ԿԱՆՈՆ 13. Յեթե բարդ բառի առաջին մասը վերջա-
նում է ի, այդ ի-ն, միանալով ա հոդակապին, տալիս է Ե
(գինի, գործ—գինի-ա-գործ=գինե-գործ):

ԿԱՆՈՆ 14. Բառն ածելու ժամանակ վերջին փակ—
բաղաձայնով վերջացող վանկի՝

- ա) Ե-ն կարող է դառնալ ի (վեպ, գիր—վիպ-ա-գիր):
- բ) ի և ու կարող են ը դառնալ (վոր չի գրվում),
կամ դուրս ընկնել (սղվել) (ջուր, աղաց—ջր-աղաց. գա-
րուն, մուտ—գարնան-ա-մուտ, գիր, դարան—գր-ա-դարան):
- գ) Յա կարող է դառնալ Ե (մատչան, դարան—մա-
տեն-ա-դարան. հրյա—հրեյական. քրիստոնյա—քրիստոնե-
յական):
- դ) Ույ դառնում է ու (բույս, բան—բուս-ա-բան):
- Բաց վանկի ո դառնում է ոյ (Կարո—Կարույի. գո—
գոյական):

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 6. ա) Կազմեցե՛ք բարդ բառեր հե-
տևյալ բառերից ու գրի առեք.

Սար, լանջ.—անձրև, ջուր.—յերկիր, գործ.—դաշտ,
վայր.—թանաք, աման.—գրիչ, աման.—ծաղիկ, աման.—

բույս, առատ.—շոգի, մեքենա.—տարի, մուտ.—լույս, ար-
ձակ.—ջուր, աղաց.—հուր, վառ.—հուր, բուղի.—ատչան,
կալ.—հոգի, առ.—կես, քաղց.—գերի, վաճառ.—լույս,
բաց.—վերջ, լույս.—իրիկուն, մուտ.—հեռու, գիր, տուն.—
որ, գիր, մատչան.—յերկաթ, ուղի, գիծ.—բարի, գործ.—
շոգի, կաթսա.—լուր, բեր.—սիրտ, կից.—բույր, շատ.—
ճշմարիտ, սեր.—ձի, վարժ.—անասուն, պահ.—ժողովուրդ,
սեր.—լեզու, գետ.—գույն, գեղ.—ամեն, ագնիվ.—բարի,
արար.—յերկիր, չափ.—հանուր, հաշիվ.—բուն, գետ.—
հանդես, տես.—լույս, նկարիչ, տուն.—ջուր, վեժ.—հաց,
թուխ.—ջուր, կիր:

բ) Յո՛ւյց տվեք ու վերլուծեցեք բարդ բառերը հետե-
վյալ վոտանավորի մեջ.

Յեվ արևը ծիրանավառ և յերեկոն ծծմբաշունչ,
յերեկոն ու արեգակը արնավրփուր, հրդեհավառ
կըտեսնեն, թե ինչպես ես դու կրում պատիժը անտրտունջ,
թե ինչպես լուռ կանչնչանան քո աչքերն ու դեմքը պայծառ:
Սև ամբոխը կրճքում պահած լոկ չարություն ոճագալար
իբ ովկիանը ըմբոստ մահիդ առաջ լսին կխոնարհե
ու հարազատ մոր պես գթոտ, խանդաղազին ու սիրաբար
քո անշունչ զին արյունաներկ դագաղի մեջ մեղմ կորորե ..
(Կարմիր Արև, «ԳԼՈՒԽԸ»)

§ 12. Տուն, անտուն.—գործ, անգործ.—ուշ, ապուշ.—
գետ, սգետ.—մարդ, սմարդ.—հաս, սհաս.—բախտ,
դժբախտ.—գույն, դժգույն.—տես, չտես.—հաս, չհաս:

ՎՈՐՈՇՈՒՄ 11. Ան, ապա, ս, դժ և չ մասնիկ-
ները, վորոնք առանձին վերցրած նշանակություն չունեն,
բառերի սկզբից դրվելով՝ նրանց մի նոր նշանակություն են
տալիս, կոչվում են բացասական նախածանցներ:

Մկզբից կամ վերջից մասնիկ ունեցող բառերը կոչ-
վում են անանցավոր բառեր:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 7. Կազմեցե՛ք բառեր՝ վերոհիշյալ
նախածանցներով ու գրի առեք:

§ 13 ա. Նալ, նալակ.—լիճ, լճակ.—տուն, տնակ.—
հալ, հալիկ.—շուն, շնիկ.—տիկի՛ն, տիկի՛նիկ.—հորթ, հոր-
թուկ.—ձագ, ձագուկ.—հայր, հայրիկ.—մայր, մայրիկ.—
քույր, քույրիկ:

ՎՈՐՈՇՈՒՄ 12. Ակ, իկ, ուկ վերջածանցները ցույց
են տալիս առարկայի փոքրությունը կամ փաղաքշական
նշանակություն ունեն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8. Կազմեցե՛ք բառեր՝ ալ, իկ, ուկ
նվազական վերջածանցներով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9. Կազմեցե՛ք բառեր՝ հետեվյալ
վերջածանցներով ու գրի առե՛ք:

Իչ, ող, վոր, անի, ոց, անոց, ուրդ, կի, ստան, վետ,
եք, երեն, ուհի, ք, ուն, եղեն, յա, ենի, յան, ատ, ային,
ական, անք, գին, գույն, երորդ, յուն, կան, յալ, եղ, նոց,
ույթ, ություն, որդ, ոտ, ուտ, ում, ցի, ունի, իք, ին, ան,
ուստ, ատ, ոտի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10. Համեմատեցեք հետեվյալ բառերի
նշանակությունը յեվ ցույց տվեք նրանց կազմությունը:

Անտերև, տերևատ.—անպոչ, պոչատ.—անկուռ, կրո-
նատ.—անգետ, տգետ.—անմարդ, ամարդ.—անտուն, տնա-
զուրկ.—անսեր, սիրազուրկ.—անգու՛ն, դժգու՛ն.—անբախտ,
դժբախտ.—անկամ, չկամ, դժկամ.—անուշ, ապուշ.—ան-
խելք, խելազուրկ.—գրիչ, գրող.—մատնիչ, մատնող.—
քաղաքային, քաղաքական.—ցեղային, ցեղական.—ծաղկոց,
ծաղկանոց.—վոսկեղեն, հողեղեն, կանաչեղեն.—խնձորե-
նի, վայրենի:

§ 13 բ. Տուն, ան-տուն.—գործ, ան-գործ.—գործ-արան,
գործ-ազուրկ.—զարմ-անայի, զարմ-ացք.—զգ-ույշ, զգ-ալ,
զգ-այուն:

ՎՈՐՈՇՈՒՄ 13. Բառի այն մասը, վոր բոլոր ձևերի
մեջ անփոփոխ մնում է, կոչվում է արմատական բառ
(յեթե առանձին գործ է անվում), կամ արմատ (յեթե
առանձին գործ չի անվում):

ՀԱՐՑԵՐ.

Ի՞նչ նշանակություն են տալիս բառերին հետևյալ
ածանցները:

1. ալ, իկ, ուկ
2. ուհի, (դուխտ և անուշ բառերն էլ).
3. ոց, անոց, արան, ստան
4. եղ, վետ
5. իչ, ող, ան
6. վոր, անի,
7. եղեն
8. ենի, ի
9. յան, ունի, ենց, ունց
10. ատ
11. ոտի
12. երորդ, բորդ
13. ում, ություն, ույթ
14. ուրդ իկ, տի
15. երեն
16. ինց
17. լի
18. ալի, ացի
- և 19. ան, ապ, տ, դժ նախածանցները:

Ցույց տվեք բարդ յեվ անցավոր բառերը հետեվյալ
վոտանավորի մեջ ու վերլուծեցեք:

Գեղախոս թոչնոց յերգի փոխարեն
կլսես այնտեղ
ճախարակների ոնգային վորոտ
և խենթ փոկերի համերգը անեղ.
այնտեղ խեղդվում են շոգու ամպերեն.
պող աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն որ,
վարդի փոխարեն
ծորում, քամվում է արյուն սրտերեն,
և շուրջդ բոլոր

շօխնի ու ժխոր
 կտեսնես՝ ինչպես թանձրացած մխով
 ծխնելույզները
 յերկինք են ցցել ազահ յերախով
 մրոտ պնչերը,
 կարծես հրաշունչ վիշապի նման,
 ուզում են շնչել
 ու յրենց քաշել
 անհուն բարձունքից փայլուն աստղերը,
 վոր նրանց թաղեն մշուշ ծխի մեջ.
 կտեսնես շարված սգավոր ու խեղճ
 արհեստանոցի աղյուս պատերը՝
 խոնավ ու թաց-թաց,
 կարծես բանվորի քրտինքով թրջված ..
 (Կարմիր արև, «ԳՈՐԾԱՐԱՆ»)

ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Ամփոփում անցածի)

ա) **ՅԵՐԿԻՍՐԲԱՌՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ** (տես գլ. II):

Ընդգծեցեք յերկբարձառները.

Հյուսիսից փչում էր քաղցրաբուլբ գեփուռը: Չյունապատ սարերը փայլում էին արեգակի ճառագայթների ներքո: Ճանապարհորդը մոտեցել էր գյուղին: Յուրաքանչյուր հարյուր քայլի վրա նա կանգ էր առնում, դյուրությամբ վայր բերում իր բեռը: Բնությունը հիանալի յերարևմուտքն արյուն էր կտրել. գեփուռը շոյում էր արտ ու արտա: Դեպի հարավ ձգվող հարթությունը հասնում էր բարձր լեռան ստորոտներին:

բ) **ՋԱՅՆԱԿԱՊԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ** (ա, ե, ո-ից հետո և ի ձայնավորի բացառությամբ) (տես § 6, կանոն 1, 2):

Ընդգծեցեք յ ձայնակապը.

1. Ճանապարհորդը յերկար նայեց հիանալի տեսարանին. գեփուռը շոյում էր նրա գեմքը: Քաղաքի կայարանը

հեռոհեռե միախառնվում էր յերեկոյան միջնադրի տակ քուն մտնող գորշ դաշտավայրի հետ:

2. Հինգ մայր ցամաքներն են՝ Յեփրոպան, Ասիան, Աֆրիկան, Ամերիկան և Ավստրալիան: Ասիան ու Ամերիկան բաժանված են Մեծ կամ Խաղաղ ովկիանոսով, իսկ Յեփրոպան և Ամերիկան՝ Ատլանտյան ովկիանոսով: Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան Յեփրոպայի պետություններից են:

3. Գաբրիելն ու Մանիան դպրոց էլին գնում. ճանապարհին պատահեցին Նատալիային: Յերեք ընկերները միասին զրուցելով, կատակներ անելով շարունակեցին իրենց ճանապարհը:

գ) **ՎԱՆԿԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՄ ՀԵԳՄԱՆ ՈՒ ՏՈՂԱԴԱՐՁԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (տես կանոն 5—10):

Արտագրեցե՛ք—բոլոր բառերը գծիկներով վանկերի բաժանելով:

Մայիսի յոթին, վաղ առավոտյան, յերբ լույսը նոր էր բացվել, գյուղացին բահն ուսին գնաց արտը շրելու: Յերբ նա արշալույսի շողերի տակ տեսավ ալեծածան արտը, նրա սիրտը լցվեց ուրախությամբ:

Բնությունն այլևս քնած չէր. թռչունների դայլայլը, առվակների խոխոջը հիացմունք էլին պատճառում մարդու:

ԲԱՌԱՎԱԶՄՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11. Ընդգծեցե՛ք նախածանցները յեվ վերջածանցները հետեվյալ բառերի մեջ (տես վորոշում 11, 12, վարժություն 9):

Գործիչ, գործունյա, գործունեություն, անգործ, գործարան, գործավոր. — բախտավոր, դժբախտ, անբախտ. — գրիչ, գրող, գրավոր, անգիր. — զիտուն, ազետ, զիտնական, զիտակ, անզետ, զիտական. — զիտակ, զիտող, զի-



տարան, դիտանոց, դիտավոր, դիտում, դիտումնավոր.—
կայուն, կայան, կայարան, անկայուն, կայունութուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12. Միեմնույն արմատից կազմեցե՞ք
միքանի բառեր՝ ածանցներով.

Որ. գործ, գործիչ, գործունյա, անգործ.— փորձ...
վարձ, դիր, շարժ, լույս, տող, հայր, մայր, յերգ, գեղ,
հաս, բախտ, բույժ, բույս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13. Արտագրեցե՞ք յեվ նշանակեցե՞ք
պարզ, բարդ յեվ ածանցավոր բառերը՝ նշանակելով համա-
պատասխան բառերի վրա ալ (պարզ), բ (բարդ), ա (ա-
ծանցավոր):

Հոկտեմբերյան Հեղափոխութեան տարեդարձին հան-
դիսավոր տոնակատարութուն է լինում:— Մենք տոնակա-
տար հանձնաժողովի ընտրութեամբ ելինք զբաղված:—
Զուգընթաց խմբերն աշակցում ելին մեզ:— Մենք դասըն-
կերներով հանդիպակաց բլուրը բարձրացանք, դիտեցինք
շրջակա լեռնաշղթաները, բարձրավանդակները, դաշտա-
վայրը, ձորակները և մոտիկ քարաժայռերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14. Կազմեցե՞ք բարդ բառեր հետե-
վյալ ձևով.

ա) Թափել, թափթփել.— ծռել, ծոմոնել.— չափել, խա-
զել, փոխել, ծակել, վազել, խշալ, գնգալ, քսել, կծել,
պոկել, կցել, փորել, կապել, տգալ, ճնգալ, թխկալ, փայլել:

բ) Մարդ-մորդ.— աման-չաման.— մանր-մունր.— հաց...
ջուր... կլոր... ծակ... պարապ... ավալ... սևիկ...

գ) Տակն ու վրա.— տուն ու տեղ.— ծառ ու... կեր ու...
վեր ու... ներս ու... լաց ու... առ ու... անց ու...
բաց ու... հավ ու... քար ու... մութ ու... որ ու...
մեծ ու... լավ ու... չարն ու... տաք ու... ծանր ու...

դ) Աճ ու դող.— ցիր ու ցան.— լաց ու... գունդ ու...
խոսք ու... սուր ու... տրդ ու...

IV. ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍԸ

§ 14. Գնալ, յերթալ.— մեկ, մի.— սեահեր, սեւմազ.—
շրթունք, պռոշ.— այտ, թուշ.— հուր, կրակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 15. Այն բառերը, վորոնք գրութեամբ
տարբեր են, իսկ իմաստով ըտրորովին նույնն են, կոչվում
են նույնանիւ բառեր:

§ 15. Մեծ, հսկա, ահագին, վիթխարի.— հպարտ, գո-
ռոզ, սեգ.— գեղեցիկ, սիրուն, գեղանի.— ահուլի, սոսկա-
լի, սարսափելի, զարհուրելի,— համարձակ, խիզախ, հան-
դուգն, ըմբոստ:

ՎՈՐՈՇՈՒՄ 16. Այն բառերը, վորոնք գրութեամբ
տարբեր են, իսկ իմաստով իրար մոտիկ են յեվ գործա-
ծութեամբ են տարբերվում, կոչվում են հոմանիւ բառեր:

Յո՛ւյց տվեք հոմանիւ բառերը.

Թովված, կախարդված, տարված այն յերգին,
վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին
դեպի յերջանիկ մի ուրիշ աշխարհ,
անհայտ ու հեռու, անձանձիթ, ոտմր...

(Հովհ. Թումանյան, «Դե՞՞՞ր ԱնՀՈՒՆԸ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15. Հետեվյալ բառերին հոմանիւներ
դրե՞ք ու գրի առե՞ք.

Որ. պարզ, հստակ, ջինջ, վճիտ.— լախ, — կարծր, —
փափուկ, — այժմ, — աշխուշտ, — գետակ, — բույր, — տաք —
սառ, — վախ, — ուղի, — անիվ, — թռչել, — կոկել, — աղմուկ, —
շշուկ, — նվազել, — քամի, — քաղցր, — յերիտասարդ, — մա-
նուկ, — ուժեղ, — լաց, — ավերել, — ճառագայթ, — հիվանդ, —
կոխիվ, — լրագիր, — դպրոց, — խանութ, — ծախել, — անխիղճ, —
զարմանալ, — բարձր, — փոքր, — մեծ, — մառախուղ, — նիհար, —
դժգուհն, — անհուն, — շոգի, — նվեր, — նստել, — նուրբ, — հով, —
սեգ, — չքնաղ, — լուռ, — փափազ, — ժպիտ, — կտրիճ, — ափ-
սոս, — տխուր, — հառաչել, — հրաշալի, — չքանալ, — ընկղմել, —
լեռ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16. Կարելի՞ յե ասել.

Մեծ մարդ, մեծ խելք, — վիթխարի մարդ, վիթխարի խելք, — տաք կոխի, տաք խոսք, — ջինջ յերկինք, ջինջ խոսք, — լաջն դաշտ, լաջն հողված, — սիրուն դաշտ, սիրուն խելք, — մանր ավազ, մանր տուն, — խոշոր ժայռ, խոշոր աղմուկ:

§ 16. Ակ (սայլի, աղբյուրի, մատանու), — փող (ղրամ, փչելու, հրացանի...), — մայր (ծնող, ծառ), — այր (մարդ, քարանձավ), — համար... տուն... կետ... գլուխ... վոտ... շունչ...

ՎՈՐՈՇՈՒՄ 17. Այն բաները, վորոնք գրությամբ նման են, իսկ իմաստով բոլորովին տարբեր, կոչվում են նույնանուն բաներ:

§ 17. Մեծ, փոքր, — խոշոր, մանր, — լավ, վատ, — բարձր, ցածր, — առողջ, հիվանդ, — թանգ, աժան, — լուսավոր, խավար:

ՎՈՐՈՇՈՒՄ 18. Այն բաները, վորոնք իմաստով բոլորովին հակառակ են, կոչվում են հականիւ բաներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17. Գտեք հետեւյալ բաների հականիշները յեվ գրի առեք հետեւյալ ձեւով՝ ուրախ — տխուր, հեռու — մոտ...

Ուրախ, — հեռու, — նեղ, — կուշտ, — յերջանիկ, — արագ, — մարուր, — փակ, — նիհար, — ունկոր, — հարուստ, — մեղմ, — վառել, — ծանր, — դատարկել, — պարզ, — խորունկ, — ուղիղ, — հարթ, — բարի, — թաց, — սիրուն, — գվարթ, — վճիտ, — դառ, — խոնավ, — բարեկամ, — կանխիկ, — ձրի, — կորուստ, — ոգուտ, — չելք, — վեր, — աջ, — առաջ, — հին, — լուրջ:

V. ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՇՈՒՎՈՒՄԸ

§ 18. Մարդ, կով, ձի, շուն, հավ, ձուկ, քար, հող, վոսկի, վարդ, միաք, ուսում, յերգ, — սրանք բոլորը առարկաների անուններ են:

ՎՈՐՈՇՈՒՄ 19. Առարկաները լինում են՝ ա. ճնշավոր (մարդ, ձի), վորոնք իրենց ազատ կամքով շարժվում են, ք. անեունյ (քար, հող), վորոնք իրենց ազատ կամքով շարժվել չեն կարող:

Ապա՝ ա. նյութական (մարդ, քար), վորոնք մատչելի յեն մեր զգայարաններին, այսինքն՝ կարող ենք աչքով տեսնել, ականջով՝ նրա ձայնը լսել յեվ այլն, ք. վերացական (միտք, ուսում), վոր հասկանում ենք մտքով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18. Հետեւյալ բաներից արտագրեցե՛ք նախ՝ շնչավոր, ապա՝ անշունչ առարկա ցույց տվող բաները.

Չու, հավ, միս, շուր, այծ, վոչխար, խոտ, կաթ, թիթեռ, մրջյուն, սայլ, ծուխ, բամի, հովիվ, կառք, վոտք, ծառ, կաջակ, մրջյուն, ժամացույց, պղինձ, թանաք, մատիտ, ճանձ, մոծակ, ճիճու:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19. Հետեւյալ բաներից արտագրեցե՛ք նախ՝ նյութական, ապա՝ վերացական առարկա ցույց տվող բաները.

Շաքար, շուր, յերագ, տանձ, ող, միտք, կամք, տախտակ, արծաթ, խոտ, բարկություն, կրակ, տանջանք, վախ, ձյուն, ամառ, սառույց, ծուխ, բարություն, հանգստություն, աշխատանք, մուրճ, կացին, ուշտ, հիվանդություն, աղ, ձմերուկ, համ, ախորժակ, փափագ, ձգտում, պետություն, ժամանակ, ամիս, տարի, ապակի, ավազ, գինի, այլուր, տարածություն:

ՎՈՐՈՇՈՒՄ 20. Առարկա ցույց տվող բաները կոչվում են գոյական անուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20. Արտագրեցե՛ք յեվ ընդձեռնե՛ք գոյական անունները.

Հասանք Հրազդանին: Հեովից դեռ յերևում եր Մասիսը կամ Արարատը: Անցանք կամրջով: Ահա «Արարատ» գործարանը, ուր զինի և կոնյակ են պատրաստում: Մենք արդեն Յերևան քաղաքումն ենք: Ահա քաղաքի հրապարակը,

Կոմսոնարներէի այգին, Աբովյան փողոցը: Քաղաքը բավա-
կանին փոխվել է. միքանի տարի առաջ այդպէս չեր: Ահա
մի շէնք, վորի ճակատին գրված է՝ «Կինո Նաիրի», մի
ուրիշը՝ «Կինո Պրոլետար»...

ՀԱՐՑԵՐ.

1. Բոլոր քաղաքներին Յերևան կարելի՞ չէ ասել:
2. Բոլոր քաղաքներին քաղաք կարելի՞ չէ ասել:
3. Բոլոր մարդկանց Արամ կարելի՞ չէ ասել:

ՎՈՐՈՇՈՒՄ 21. Այն անունները, վորոնք ընդհանուր
են յե՛վ կարող են տրվել թե մեկ առարկայի ու թե նրա
տեսակին պատկանող բոլոր առարկաներին, կոչվում են
հասարակ անուն (որ. մարդ, սեղան, շուր, ձուկ, աստղ,
վարդ):

ՎՈՐՈՇՈՒՄ 22. Այն անունները, վորոնք տրվում են
վորե՛վ վորո՞շ առարկայի, իսկ նրա տեսակին պատկանող
բոլոր առարկաներին տրվել չեն կարող, կոչվում են հատուկ
անուն (որ. Գրիգոր, Յերևան, Մասիս, Սևանա լիճ, Մարս):

ԿԱՆՈՆ 12. Հատուկ անունները մեծատառ են գրվում՝
(տես վորոշում 7):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21. Արտագրեցե՛ք յե՛վ հատուկ ա-
նուններն ընդգծեցե՛ք.

1. Անդրկովկասի նշանավոր քաղաքներն են՝ Թիֆլի-
սը, Բագուն, Բաթումը, Յերևանը. առաջինը Վրաստանի
ՍՊՀ Հանրապետության և, միևնույն ժամանակ, ամբողջ
Անդրկովկասյան ՍՖՍՀ Հանրապետության մայրաքաղաքն է:
Թիֆլիսի միջով հոսում է Գուռ գետը: Յերևանը Հայաս-
տանի մայրաքաղաքն է, գտնվում է, Հրազդանի ափին:
Բագուն Ադրբեջանի մայրաքաղաքն է, գտնվում է Կաս-
պից ծովի մոտ, Ափշերոնյան թերակղզու վրա, վոր հա-
րուստ է նավթով:

2. Յելան, գնացին Ուրալից դեպի Կարպատները
լուրթ ու Կարպատներից մինչև Երզրում ու Երզրումից՝
Տրիպոլի, Հոռոմ: (Կ. Ա.):

3. Յե՛վ ինչո՞ւ միայն նա չերգի, միայն նա—Հովակի-
մը, Կարոն, Սողոմոնը, Մարգարը կամ մի բիթլիսցի, վա-
նեցի Պողոս. իսկ Իվանը, Յուսուֆը, Չունկ-Ֆուն, վոր
իրար ճանաչում են վաղուց: (Կ. Ա.):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22. Գրեցե՛ք 5-ական հատուկ անուն-
ներ՝ տղամարդկանց, կանանց, պետությունների, քաղաք-
ների, գյուղերի, գետերի, լեռների, ծովերի:

§ 19. Կով, կովեր. — ձի, ձիեր. — քար, քարեր. —
միտք, մտքեր. — աշակերտ, աշակերտներ. — ճանապարհ,
ճանապարհներ:

ՎՈՐՈՇՈՒՄ 23. Գոյական անուններն ունեն յերկու
թիվ՝ յեզակի յե՛վ հոգնակի: Յեզակին ցույց է տալիս մի
առարկա, հոգնակին ցույց է տալիս նույն տեսակի՝ մեկից
ավելի առարկաներ:

ԿԱՆՈՆ 13. Միավանկ բառերից հոգնակի կազմելու
համար ավելացնում ենք եք մասնիկը, իսկ քաղմավանկ
բառերին՝ նեք մասնիկը:

Միավանկ բառերի ի, ու ծայնավորները կարող են
փոխվել ք-ի, վոր չի գրվում (շուն, շներ. — տիկ, տկեր):

Յույց տվե՛ք գոյականները յե՛վ նրանց թիվը.

1. Յելան, սահեցին հանկարծ
փողոցի ամառվա փողում—
բյուրավոր բանակներ անահ—
զրահապատ բանակներ ուժի:
Շողացին սվիններ, սրեր,—
յերգեցին կրծքեր հզոր—
գրոշներ ծփացին արնավառ—
գրոշներ կարմիր, բոսոր...
(Կարմիր Արև, «ԱՄԵՆԱՊՈՅՄ»)

2. Բոլոր ծովերի բոլոր ափերից,
բոլոր գետերի բոլոր յեզրերից
խոպոտ, այլանդակ
և սպառնալից մոնչյուններով
մեծ արհավիրքի և ավերածի

վողբը վոռնացին
 շոգենավերի շշակներն անվերջ·
 խելահեղորեն լացին, ծվացին
 բոլոր գյուղերի ու քաղաքների սուլիչները գիլ,
 լեռնալանջերի առապարներով,
 մութ անտառների արահետներով,
 խորածորերի նեղ շավիղներով
 շարժվում են ահա,
 քայլում են ահա դեպի դաշտերը՝
 բահ ու բրիչով,
 գերանդիններով ու յեղաններով
 արևառ խոժոռ թուխ գյուղացիներ,
 դազանակներով զինված հովիվներ,
 դուրով, սղոցով, նիգով ու լինգով:
 (Կարմիր Արև, «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23. Կազմեցեք հետեվյալ անունների հոգնակին.

ա) Քար, հող, կավ, նավ, ծակ, սար, վարդ, սոխ, բառ, տառ, կով, այծ, ճանձ:

բ) Գիրք, միրգ, միս, գիծ, կիր, թուր, ջուր, մուր, խուփ, գունդ, թուղթ:

գ) Ատամ, տախտակ, գրիչ, պարտեզ, աշակերտ, տարի, բույս, վիշ:

դ) Դասագիրք, սեղանատուն, ողանավ, լրագիր, հեռագիր, հողակույտ, մանկատուն, դասատուն, սևահող, ավազաթումբ:

ե) Ջրկիր, հացթուխ, մարդակեր, լուսաբեր, լրատու, դասատու, հեռախոս, թղթատար, չերկրագործ, գորավար, լրագետ, հաստավիդ, հաստափոր, հանքափոր, սիրունատես:

զ) Ակ, ձուկ, մուկ, նուռ, դուռ, հարս, լեռ, բեռ, կուռ, գառ, թոռ, վոտ, փուռ, ձեռ:

է) Աստղ, կոճղ, սանր, ուելս:

ը) Մարդ, կին, աղամարդ, անձ, զգացում, հուզում:

§ 20. ա) Այստեղ մի գիրք կա... գրքեր կան:—Նա հիսուն կուպեկ գրքի տվեց... գրքերի տվեց:—Այս թուղթը

գրքից է պոկել... գրքերից է պոկել: Նա դասը գրքով է պատրաստում... գրքերով է պատրաստում:—Այդ բոլորը գրքում գրված է... գրքերում կան:

բ) Արշակի գիրքը կորավ...գրքերը կորան: Նա սպասում է գրքին... գրքերին:

ՀԱՐՑ. Գիրք բառն ի՞նչպես փոփոխվեց այդ խոսքերում:

Գիրք (գիրքը), գրքի (գրքին) գրքից, գրքով, գրքում:—Գրքեր (գրքերը), գրքերի (գրքերին), գրքերից, գրքերով, գրքերում:—ահա այն բոլոր ձևերը, վոր կարող է ունենալ գիրք գոյական անունը աշխարհաբար հայոց լեզվում. այդ ձևերը հինգ են:

ՎՈՐՈՇՈՒՄ 24. Գոյականի ամեն մի փոփոխված ձևվը կոչվում է ճուրվ: Մի բառ ճուրվել նշանակում է՝ ասել այն բոլոր ձևվերը, վոր նա կարող է ունենալ լեզվի մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24. Լրացրե՛ք հետեվյալ նախադասությունները:

ա) Քար բառով.—Այստեղ մի...կա: Նա կանգնած է... մոտ: Նա...հեռացավ: Այս պատը...է շարած: Նա մնաց սար ու...:

բ) Քարեր բառով.—Այստեղ շատ...կան: Նա կանգնած է...մոտ: Նա...հեռացավ: Այս պատը մեծ-մեծ...է շարած: Նա մնաց սարերում ու...:

գ) Ջուր բառով.—Առուն...կա (ի՞նչ կա): Նա գնաց... (ինչի): Լվաց... (ինչով): Հանեց... (ինչից): Խեղդվեց... (ինչով):

դ) Ջրեր բառով.—Մեր չերկրում լավ-լավ... (ինչեր) կան: Այս տեսակ-տեսակ... (ինչերին) շներ են պետք: Խմենք այս աղբյուրների պաղ-պաղ... (ինչերից): Նա կազդուրվեց... (ինչերով): Տեսակ-տեսակ ձկներ կան այս... (ինչերում):

ե) Գինի բառով.—Այս կարասում... (ի՞նչ) կա: Նա սպասում է... (ինչի): Նա հիվանդացավ... (ինչից): Նա հարբել է... (ինչով): Թաղվեց... (ինչով):

դ) Մարդ բառով. — Սենյակում մի... (խնչ) կա: Նա հանդիպեց մի...: Առա մի...: Նրանց թիֆը ավելի չե մի...: Սիրտ չմնաց խեղճ...:

ե) Մարդը բառով. — Ահա չեկավ... (սով): Յես սպասում եմ այն... (սև): Ստացա քեզ ծանոթ... (ուսմից): Այս բանը չեղավ այն... (ուսմիսով): Ել ու՛՛՛՛՛՛՛՛՛՛ չմնաց իմ ծանոթ... (ուսմիսով):

ը) Գուռ բառով. — Այս շենքում մի... փակ ե: Նա կանգնած է... ատաղ: Այս դուռն ավելի լայն է այն...: Յես ներս մտա հարավային...: Նա մենակ կանգնած մնաց բաց...:

թ) Քույր բառով. — Ահա չեկավ Գուրգենի...: Հովհաննեսը մի գիրք ընծայեց իր...: Արշակը նամակ ստացավ իր...: Այս բանը չեղավ նրա...:

ժ) Մայր բառով. — Նրա... բարի կին է: Նա կարոտ է փողաքշող...: Թաղետոր անջատվեց...: Նա պարծենում է իր...: Վոչ իր հորուսն է տեսել, վոչ էլ իր...:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25. Լրացրե՛ք հետեվյալ նախադասությունները՝ համապատասխան փակագծերում դրված հարցերի:

Յես... (ինչո՞վ) ... (վճրաեղից) չեկա... (սուր): — Նա... (ինչո՞վ) կարեց... (խնչը): — Մենք... (ինչի՞ց) ... (խնչ) շինեցինք: — Մեր... (ինչո՞ւմ) մի... (խնչ) կա: — Յերեկ... (ո՞վ) ... (սև) մոտից չեկավ... (սուր): — Նա շատ է պարծենում իր... (ուսմիսով): — Իմ... (ովքե՞ր) շատ խելոք են:

§ 21. Ահա իմ առաջ մի գեղեցիկ տուն: Մտնում եմ ներս: Ընդարձակ սենյակ, լայն լուսավումներ, մաքուր հատակ: Ահա տանտերը. բարձրահասակ մի մարդ...:

Այս հատվածում գոյականները (թե չեզակի թվով և թե հոգնակի) դրված են անփոփոխ, ուղիղ ձևով և պատասխանում են ո՛վ կամ ինչ, ովքե՛ր կամ ինչեր հարցերին:

ՎՈՐՈՇՈՒՄ ... Գոյականի անփոփոխ, ուղիղ ձևվը կոչվում է ուղղական հոլով:

§ 22. Մոտեցա պատին. նայեցի ժամացույցին. հենց այդ ժամին պիտի գնայի, ներկա լինելի ժողովին:

Այս հատվածում գոյականները պատասխանում են ինչի՛ (ն) կամ ո՛ւմը հարցերին ու դրված են սրական հոլով:

§ 23. Այդ բանն իմացա իմ ընկերներից՝ Արշակից, Գրիգորից ու Սահակից: Նրանք էլ փայտից են պատրաստել:

Այստեղ գոյականները պատասխանում են ո՛ւմնից, ինչի՛ց հարցերին ու դրված են բացառական հոլով:

§ 24. Մղրցով կարեցինք, ուրագով տաշեցինք, սոսնձով կպցրինք. Մենակ Արամով չեք լինի, միասին աշխատեցինք:

Այստեղ գոյականները պատասխանում են ինչո՛վ, ումսո՛վ հարցերին ու դրված են գործիական հոլով:

§ 25. Այդ բանը գրքում կարդացի և տետրակում նշանակեցի:

Այստեղ գոյականները պատասխանում են ինչո՛ւմ հարցին ու դրված են ներգոյական հոլով:

ՎՈՐՈՇՈՒՄ 25. Վորովհետեվ մի բառը հայերենում հինգ ձևով կարող է ունենալ կամ հինգ տեսակ կարող է փոխվել (§ 17) — հաշվելով նայել նրա ուղիղ ձևվը, այդ պատճառով հայերենում հինգ հոլով կա, վորոնցից ամեն մեկը մի ձևով է ցույց տալիս: Այդ հոլովները հետեվյալներն են.

ա) Ուղղական հոլով, վոր ցույց է տալիս բառի ուղիղ, անփոփոխ ձևը և հատուկ վերջավորությունն չունի. որինսակ՝ մարդ, ձի, կով, հող, ջուր, չերկիր, մարդիկ, ձիեր, կովեր, հողեր, ջրեր, չերկրներ:

բ) Տրական հոլով, վոր չեզակիում ունի հետևյալ վերջավորությունները.

1) ի (կովի, ջրի, աշակերտի, լճի) կամ ին (կովին, ջրին, աշակերտին, լճին — ն հոլով):

- 2) ու կամ ուն (գինու, ձիու, մատանու, սիրելու):
- 3) ան, վան, յան (դռան, լեռան, տարվան, վաղ-վան, չարության, արչան):
- 4) ոջ (քրոջ, կնոջ, տիրոջ):
- 5) ու (հոր, մոր, յեղբոր):
- 6) ց (միայն հոգնակիում—մերոնց, ձերոնց, վոմանց, Գրիգորենց):

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1.—Համապատասխան տրական հո-
լովի յեզակի թվի վեց վերջավորութուններին վեց
տեսակի հոլովում կա (տես ներքևում «Հոլովումների
պատկերը»):

գ) Բացառական հոլով, վոր վերջանում է ից, ուց
(կովից, լճից, գինուց, վոսկուց):

դ) Գործիական հոլով, վոր վերջանում է ով (լճով,
գինով, վոխով):

ե) Ներգոյական հոլով, վոր վերջանում է ում (լճում,
գինում, վոսկում):

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 2.—Անձնավորություն ցույց տվող
բառերը (մարդ, կին, աշակերտ, յերգիչ և այլն) ում
վերջավորությամբ ներգոյական, սովորաբար, չեն
դրվում. այդ բառերի ներգոյականը կազմվում է տրա-
կան հոլովից՝ մեջ բառն ավելացնելով (մարդու մեջ,
կնոջ մեջ և այլն):

ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

I

Յեզակի		Հոգնակի	
Ուղղ. հոգ	հողը	հողեր	հողերը
Տր. հողի	հողին	հողերի	հողերին
Բաց. հողից	(հողիցը)	հողերից	(հողերիցը)
Գործ. հողով	(հողովը)	հողերով	(հողերովը)
Ներգ. հողում	(հողումը)	հողերում	(հողերումը)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26. Հոլովեցե՛ք հող բառի նման հե-
տեվյալ բառերը.

Քար(ը), ծով(ը), ջուր(ը), կով, այծ, տետրակ,
գլուխ, խրճիթ, բանվոր, ուսուցիչ, ճանապարհ, գործա-
րան, դասագիրք, յերգիչ, գրատախտակ, սևահող, լրագիր,
հեռագիր, հացթուխ, ջրկիր, ջրվեժ:

II

Յեզակի		Հոգնակի	
Ուղղ. գինի	գինին	գինիներ	գինիները
Տր. գինու	գինուն	գինիների	գինիներին
Բաց. գինուց	(գինուցը)	գինիներից	(գինիներիցը)
Գործ. գինով		գինիներով	
Ներգ. գինում		գինիներում	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27. Հոլովեցե՛ք գինի բառի նման հե-
տեվյալ բառերը.

Մատանի(ն), կաշի(ն), ձի, թի, վոսկի, հոգի, տարի,
գոտի, գարի, մարդ, վայրենի, խնձորենի, կաղնի, խոզե-
նի, գեղանի, Անի, Վանի:

III

Յեզակի		Հոգնակի	
Ուղղ. փուռ	(փուռը)	փոռներ	փոռները
Տր. փոռն	(փոռնը)	փոռների	փոռներին
Բաց. փոռից	(փոռից)	փոռներից	
Գործ. փոռով	(փոռով)	փոռներով	
Ներգ. փոռում		փոռներում	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28. Փուռ բառի նման հոլովեցե՛ք.

Ձուկ, մուկ, լեռ, կուռ, դուռ, նուռ, գառ, յեզ, թուռ—
Ուսում, անկում, թաղում, բացում, բորբոքում, գտում,
վճարում, ձուլում:—Գոլություն, միություն, արչուն, ան-
կյուն:—Գարուն, ամառ, աշուն, ձմեռ:—Որ, շաբաթ, ամիս,
տարի, վաղը, յերեկ:

IV

Յեզակի	Հոգնակի
Ուղղ. քույր քույրը	քույրեր քույրերը
Տր. քրոջ քրոջը	քույրերի քույրերին
Բաց. քրոջից(ը)	քույրերից(ը)
Գործ. քրոջով	քույրերով
Ներգ. (չունի)	(քույրերում)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29. Բույր բառի պես հոլովեցե՛ք.

Մորաքույր, հորաքույր, կին, տիկին, տանտիկին, ընկեր,

V

Յեզակի	Հոգնակի
Ուղղ. յեղբայր յեղբայրը	յեղբայրներ յեղբայրները
Տր. յեղբոր յեղբորը	յեղբայրների յեղբայրներին
Բաց. յեղբորից(ը)	յեղբայրներից(ը)
Գործ. յեղբորով	յեղբայրներով
Ներգ. (չունի)	(յեղբայրներում)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30. Յեղբայր բառի պես հոլովեցե՛ք.

Հայր, մայր, նախահայր, նախամայր, հորեղբայր, մորեղբայր, սանահայր, սանամայր:

VI

Հոգնակի	Հոգնակի
Ուղղ. մերոնք	ասույենք
Տր. մերոնց(ը)	ասույենց(ը)
Բաց. մերոնցից(ը)	ասույենցից(ը)
Գործ. մերոնցով	ասույենցով
Ներգ. (չունի)	(չունի)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31. Վերոհիշյալ բառերի պես հոլովեցե՛ք.

Ձերոնք, իմոնք, քոնոնք, պապոնք, տատենք, հերանք, ներսեսենք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32. Արտագրեցե՛ք յեվ գոյականի վերեվ նշանակեցե՛ք իր հոլովի սկզբնատառը (Ու. Տ. Բ. Գ. Ն.):

1. Կապույտ յերկնքով ամպեր են սահում: Արևի ճառագայթները սփռվել են սարերում ու ձորերում: Իպրոցում պարապմունքներն արդեն սկսվել են: Մեր դասարանի աշակերտներից վոմանք բացակա չեն: Մենք դպրոց ենք յեկել՝ գրքերով, տետրակներով, դասական բոլոր պիտույքներով: Մեր ընկերներից՝ Թադևոսը, Հովհաննեսը, Գաբրիելն ու Աննիկը չեն բերել իրենց պիտույքները:

2. Լ Ե Ն Ի Ն Ի Մ Ա Հ Ը

Պրագի, Բերլինի գործավոր թաղերում,
 Լոնդոնի, Պարիզի և Կոպենհագենի,
 բյուրավոր մուրճեր ծանրորեն զարկին.
 «Լենինը մեռավ, մեծ ընկեր Լենին»:
 Վառվում են քաղաքներ՝ Մոսկվա ու Վիեննա,
 Բոմբեյ, Կապշտադ դառնագին սրտով.
 Վողբը պոթիկում և վշտի անդունդից.
 «Լենինը մեռավ, մեծ ընկեր Լենին»:
 (Կարմիր Արև)

3. Հեղեղատները

Ժայռեր են պոկում լեռնալանջերից
 և թնդյուններով, գլրդյուններով,
 վորտուժներով և բումբյուններով
 վար են գլորվում ժայռերն ամենի,
 փորում են հողը,
 ծառեր են քաշում,
 ավեր տարածում:
 Բայց անա քամին դիպչում և ծովին...
 ծովը նախ մեղմիկ մրմունջ և հանում,
 տրտունջ և հանում,
 հետո հուզվում և տակավ առ տակավ,
 և բողբոլում և, և բղավում և խռովուն ձայնով.
 ապա՛ կատաղած՝ փքվում և, ուռչում,

Թափահարում ե բաշը փրփրած,
հազար ու հազար քաղցած վագրերի
անեղազղորդ մռնչյուններով դարկում ե ափին:
(Կարմիր Արև, «ԱՊՍՏԱՄԲՈՒՅՈՒՆ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33. Արտագրեցե՛ք յեվ փակագծերով
ըրած գոյականները հորովեցե՛ք՝ իմաստի համապատասխան:
Արամը մոտեցավ իրենց տան... (դուռ): Բարձր...
(լեռ) ստորոտում մի գյուղ կա: Մենք գնացինք... (ձուկ):
Նա պատահեց իր... (հայր և մայր): Յես իմ... (քույր)
նամակ ստացա: Հոկտեմբերը... (աշուն) ամիսներից ե:
Մենք սովորում ենք... (դպրոց): Այս ճանապարհն անց-
նում ե... (սարեր և ձորեր): Իմ... (յեղբայր) մի գիրք
ստացա: Դու կտրեցիր... (գինի) բաժակը: Հիվանդը...
(տաքություն) մեջ ե: Մենք գրում ենք... (գրիչ և մա-
տիտ): Մեր... (զրքեր) նկարներ կան: Դասարանի...
(Ղերմություն) աստիճանը բարձր ե: Մենք յեկանք...
(կառք): Այս տունը բարձր ե ձեր... (տուն): Հայրս այժմ
գտնվում ե... (քաղաք): Քամին փչում ե... (լեռներ):
Գնահ այս... (ճանապարհ): Սեանա... (լիճ) շատ ձկներ կան:
Նա քնել ե աջ... (կուռ) վրա: Սերոբը տնքում ե ծանր...
(բեռ) տակ: Այդ... (նուռ) գույն ունի: Բեր... (գինի և
ողի) բաժակները: (Բուրդ)... գուլպա պատրաստեցին:
Գնած իրերը փաթաթեց... (թուղթ): Զգուշացիր քացի
տվող... (ձի): Ո՛վ չգիտե... (գումարում) գործողությունը:
Բոլորդ ներկայացեք բժշկական... (հետազոտում): Ամեն
որ... (յեղանակ) որագիր կազմեցեք: Զափեցեք ջրի...
(Ղերմություն) աստիճանը: Մուկը վախենում ե... (կատու):
Ճուտիկը դուրս յեկավ... (ձուկ): (Առու)... ափին մի ուռի
կա, վորի... (սովեր) հոտաղները հանգստանում են...
(ամառ) շոգին: Ուրբաթ... (որ) դասերը պատրաստել եմ,
միայն... (Թվաբանություն) դասից յերկու խնդիր ե մնում:

Բ. Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

§ 26. Սուրբիկը դպրոցից յեկավ տուն. նա նստեց նա-
խաճաշի:—Աշակերտները բակից հեռացան. նրանք այլևս
դասեր չունեցին:—Աշխենը շատ ուրախացավ. նրան մայրը
գիրք եր նվիրել:—Իմ յեղբայրը քաղաքում ե ապրում.
Նրանից յերեք նամակ ստացա:—Ահա քո տված գրքերը.
սրանք կարդացել եմ:—Յես «Լուսարձակ» եմ ստացել. նոր
տպված գիրք ե այդ:—Տես, ինչ լավ մատիտ ե. այս
կտաս վաչիկին:—Իմ «Կարմիր Արևը» կորել ե. լավ գիրք
եր այն:—Վերցրու այս տետրակները. սրանք Մինասին
կտաս:—Այդ գրքերը թող մնան. զրանք ինձ պետք են:—
Այսոր յեկավ այն աշակերտը, վոր յերեկ հիվանդ եր:—
Մուկուչին գովում եր, ով տեսնում եր նրա արածը:—Կա-
տարիք այն բոլորը, ինչ քեզ ասացի:—Ահա այն գյուղը, ուր
յես ապրում եմ:—Յեկա այն որը, յերը դու բացակա եցիր:

ՀԱՐՅ.—Ընդգծված բառերը (նա, նրանք և այլն) ինչ
բառերի տեղ են գրված:

Յես, դու, նա, մենք, դուք, նրանք (նոքա), այս, այդ, այն,
սա, դա, սրանք, զրանք, ով, ինչ, ուր, յերը—գերանուններ
են: Դերանունները նշանակությամբ գոյական բառեր են:

ՎՈՐՈՇՈՒՄ 26. Դերանուն կոչվում են այն գոյական
բառերը, վորոնք զրվում են ծանոթ առարկաների անուն-
ների տեղ՝ այդ անունները նորից չկրկնելու համար. որ.
Սուրբիկը դպրոցից յեկավ տուն. նա (Սուրբիկը) նստեց նա-
խաճաշի. — այստեղ նա բառը գրված ե Սուրբիկ անվան փո-
խարեն, նրա տեղ, վորպեսզի Սուրբիկ բառը մոտեմոտ
չկրկնենք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33. Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցե՛ք
դերանունները.

Կանչեցեք Սերոբին, Աշոտին ու Բարգենին. նրանք
սանյեռչակի անգամներ են: Աշոտն իմ ընկերն ե. յես
նրան վաղուց եմ ճանաչում. մենք միասին աշխատում

էջինք աշխոսպում: Յեկէք գնանք Գուրգենի մոտ. նրանց տունը մոտ է մեզ. նրան կվերցնենք հետներս, կգնանք դպրոց, միասին կպատրաստենք մեր վաղվա աշխատանքները: Թե՛ յես, թե՛ դու, թե՛ նա—աշխորհրդին պիտի հաշիվ տանք: Սրան ձեզ հետ տարեք, իսկ նրան՝ թողեք այստեղ: Այս պիտի կարդաս, իսկ այն՝ կարելի չե՛ չկարդալ: Յես այդ եմ ջարդել և վոչ թե՛ այն: Սրանով կգրես, իսկ գրանով կջնջես: Նրանք իմ ընկերներն են: Դրանք իմ գրքերն են. յես նրանցով եմ դաս պատրաստում: Նրանցից առա, սրանց տվի: Բացի ինձնից, այստեղ էջիք՝ դու, նա. սա միայն քիչ ուշ յեկավ: Ով տեսնի՛ կգարմանա: Ինչ ուզես՝ կտեսնես: Ուր ուզես՝ կգնաս: Յերբ ուզես՝ կկարդաս: Տնւր այն գիրքը, վոր ստացար: Տնւր այն մատիարը, վորով գրում ես: Մենք պետք է ոգնենք միմյանց: Ոգնեցեք մեկմեկու: Ձեռք տվեք իրար: Ո՞վ է այսոր բացակա: Ի՞նչ ասաց նա: Ո՞ւր գնաց ընկերդ: Յերբ կորցրիք գիրքդ: Վերն է լավ և վերը՝ վատ: Ի՞նչ վորն է, քանը վորն է: Մերը վորն է, ձերը վորն է:

§ 27. Յես գնում եմ, իսկ դու գալիս ես: Նա չի ուզում մեզ հետ գալ: Մենք կարգում ենք: Դուք նկարում եք: Նրանք գնացին: Յես այստեղ եմ: Մենք այստեղ չկայինք:

Յես, դու, նա, մենք, դուք, նրանք—դրված են անող կամ յեղող անձի անվան տեղ:

ՎՈՐՈՇՈՒՄ 27. Յես, դու, նա, մենք, դուք, նրանք, ինքս, ինքը, ինքը, ինքներդ, իրենք—կոչվում են անձնակասն դերանուններ, վորովհետեւ դրվում են անձի անվան տեղ:

§ 28. Այս իմ գիրքն է, իսկ այդ՝ քոնը: Այն վաղուց է կորել: Սրանք մեծերն են, իսկ դրանք՝ փոքրերը:

ՎՈՐՈՇՈՒՄ 28. Այս, այդ, այն, սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք—կոչվում են ցուցական դերանուններ, վո-

րովհետեւ առարկայի անվան փոխարեն դրվելով՝ արտահայտում են ձեռքով ցույց տալու կամ մտքով ակնարկելու գաղափար:

§ 29. Աշխենն ու Վարդուշը միշտ ոգնում են միմյանց: Նրանք յերբեք չեն մոռանում մեկմեկու: Լավ գիտես, վոր ընկերներն իրար պետք է սիրեն և ոգնեն:

ՎՈՐՈՇՈՒՄ 29. Միմյանց, մեկմեկու, իրար—կոչվում են փոխադարձ դերանուններ:

§ 30. Ընտրության ժամանակ իմ ձայնը կստանա այն ընկերը, ով ամենից ավելի յեռանդուն է.—կատարեցեք այն աշխատանքները, ինչ հանձնարարել ենք ձեզ:—Գնա մտաիկ գլուղը, ուր մեր ընկերներն են այժմ:—Յեկ այն որը, յերբ յես այստեղ կլինես:—Յեկավ մեր ընկերը, վոր յերեկ հիվանդ էր:

ՎՈՐՈՇՈՒՄ 30. Ով, ինչ, ուր, յերբ, վոր—կոչվում են հարաբերական դերանուններ:

§ 31. Ո՞վ գիտե նրա տեղը:—Սըշակն ի՞նչ ասաց:—Ո՞ւր գնանք:—Յե՞րբ յեկավ նա:—Այս գրքերից վոր էս ուզում:

ՎՈՐՈՇՈՒՄ 31. Ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, յե՞րբ, վո՞ր—կոչվում են հարցական դերանուններ:

§ 32 Յես ել մատիտ ունիմ, դու յել. իմը սև է, իսկ քոնը՝ կարմիր:—Իմը թող չլինի, իրենը լինի:—Մե՞րն է լավ, թե՛ ձերը:—Նրանցն ամենից լավն է:—Յես գրում եմ իմով, դու գրում ես քոնով:—Իմոնք տար, քոնոնք բեր:

ՎՈՐՈՇՈՒՄ 32. Իմ, քո, իր (յուր), մեր, ձեր, նրանց (նոցա)—կոչվում են սացական դերանուններ:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Դերանուններից միքանիսը, բացի գոյականների՝ մեզ ծանոթ հինգ հոլովներից, ունեն նաև սեռական հոլով, վոր արական հոլովից տարբերվում է ձեզով յեկ կիրա-

առթլամբ: Այդպիսով, մինչդեռ գոյականների սեռականի և տրականի մեջ, ըստ ձևի, վոչ մի տարբերութուն չկա, վորով և գոյականների հորվական ձևերում սեռական հորով չկա,—գերանուններից միքանիսն ունեն սեռական հորովի առանձին ձև:

Յ ե գ ա կ ի

Ուղղ. չես	դու	նա	ինքը
Սեռ. իմ	քո	նրա	(Տր. նման)
Տր. ինձ	քեզ	նրան	իրեն
Բաց. ինձնից	քեզնից	նրանից	իրենից
Գործ. ինձնով	քեզնով	նրանով	իրենով
Ներգ. ինձնում	քեզնում	նրանում	իրենում

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ. մենք	դուք	նրանք	իրենք
Սեռ. մեր	ձեր	(Տր. նման)	(Տր. նման)
Տր. մեզ	ձեզ	նրանց	իրենց
Բաց. մեզնից	ձեզնից	նրանցից	իրենցից
Գործ. մեզնով	ձեզնով	նրանցով	իրենցով
Ներգ. մեզնում	ձեզնում	նրանցում	իրենցում

Յ ե գ ա կ ի

Ուղղ. սա	դա	ով	ինչ	վոր
Սեռ. սրա	դրա	(Տր. նման)	(Տր. նման)	վորի
Տր. սրան	դրան	ում	ինչի	վորին
Բաց. սրանից	դրանից	ումնից	ինչից	վորից
Գործ. սրանով	դրանով	ումնով	ինչով	վորով
Ներգ. սրանում	դրանում	ումնում	ինչում	—

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ. սրանք	դրանք	ովքեր	ինչեր	վորոնք
Սեռ. (Տր. նման)	(Տր. նման)	(Տր. նման)	(Տր. նման)	(Տր. նման)
Տր. սրանց	դրանց	—	ինչերի	վորոնց
Բաց. սրանցից	դրանցից	—	ինչերից	վորոնցից
Գործ. սրանցով	դրանցով	—	ինչերով	վորոնցով
Ներգ. սրանցում	դրանցում	—	ինչերում	վորոնցում

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34. Հետեվյալ նախադասութուններն այնպե՛ս փոփոխեցեք, վոր նրանց մեջ յեղած դերանունները հոգնակի դրվեն.—որ.՝ յերեկ ո՞վ յեկավ,—յերեկ ովքեր յեկան:

Յես յեկա դպրոց: Դու այսոր նրան տեսել ես: Արշակը ինձ գիրք տվեց: Այս կտաս Գուրգենին: Յերեկ ո՞վ յեկավ: Սա յե այն տղան, վորի մասին ասում եյի: Թե՛ յես, թե՛ դու և թե՛ նա այսոր այնտեղ պիտի լինենք: Իմ, քո և նրա մասին ե խոսքը: Ինձնից առար, նրան տվիր: Ինձնում ել ուշժ չմնաց: Քեզնում ընկերական վոգի չկա: Սրանով և դրանով կարելի յե կարել: Ինքն ե այդ բանն արել: Գիրքն իրեն կտաս:

Գ. ԱԾԱԿԱՆ

§ 33. Մենք կանգ առանք գեղեցիկ և քարձր շենքի առջև: Արևի պայծառ շողերով վողողվել ե կանաչ դաշտավայրը: Թանձր ծուխը բարձրանում ե քարաշեն գործարանի հսկայական ծխնելուղներից: Տան յերրորդ հարկում յերեք սենյակ կա:

Գեղեցիկ, բարձր, պայծառ, կանաչ, թանձր, քարաշեն, յերրորդ, յերեք բառերը առարկաների հատկանիշներն են ցույց տալիս:

ՎՈՐՈՇՈՒՄ 33. Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերն ածական են կոչվում:

§ 34. Յես ունիմ մի լավ գիրք:—Այդ լավ գրքին մի ուրբի յեմ տվել:—Այդ լավ գրքից արտագրիր միքանի տող:—Այդ լավ գրքով պատրաստիր դասդ:—Այդ լավ գրքում գրված ե:—Այս լավ գրքերը,—այս լավ գրքերի...

ԿԱՆՈՆ 14. Ածականը, յերբ գործ ե ածվում գոյականի հետ, անփոփոխ ե մնում, չի հոլովվում:

§ 35. Այդ մատիտներից մեծը տուր, իսկ փոքրը թող մնա:—Մեծով կգրեմ, փոքրով չեմ գրի:—Մեծին փող կտամ, փոքրին չեմ տա:—Մեծերից մեկը վերցրու:

ԿԱՆՈՆ 15. Ածականը, յերբ գործ եւ ածվում առանց գոյականի, փոփոխվում ե, հոլովվում ե գոյականի նման, ընդունելով ն(ը) հոդը:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 35. Արտագրեցե՛ք յեւ ընդգծեցե՛ք ածականները.—

Մենք գրում ենք սև թանաքով սպիտակ թղթի վրա: Ընդարձակ ու յերկար փողոցի յերկու կողմերում բարձր տներ են շարված: Վերին հարկից դեպի ստորին հարկը թեք սանդուխք ե գրված: Թանձր խավարը լուսավորվում ե ճրագի աղոտ լուսով: Ահա մի վոսկե ժամացույց՝ արծաթե շղթայով: Պիոներական ակումբի թատերական դահլիճում յերեքշաբթի որը հետաքրքրական ներկայացում կար: Սանիտարական հանձնաժողովը յերրորդ և չորրորդ խմբերի աշկերտներից ե կազմված:

ՎՈՐՈՇՈՒՄ 34. Առարկայի վորակ (ինչպիսի լինելը) ցույց տվող ածականները կոչվում են վորակական ածականներ. որինակ՝ սիրուն մատիտ, կարմիր մատիտ, մեծ մատիտ, փոքր մատիտ, բարակ մատիտ, աժան մատիտ, թանկ մատիտ, լավ մատիտ, վատ մատիտ և այլն:

Յո՛ւց տվեք վորակական ածականները հետեւյալում:

Մենության խավար գնդանից կրկին
յես վերագարձա հզոր ու հպարտ,
և ինձ վողջունեց աղմուկը գվարթ
ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին:
Անխոս տանջանքիս գիշերում անբուն
իր հուրը վառեց մի պայծառ կարոտ,—
նոր սիրով լեցուն՝ դարձա յես ձեզ մոտ,
և նոր յերգեր են հնչում իմ հոգում:

ՎՈՐՈՇՈՒՄ 35. Առարկաների թիվ ու համար ցույց տվող ածականները թվական են կոչվում և յերկու տեսակ են լինում.

ա. Քանակական ածական, վոր ցույց են տալիս առարկայի քանի կամ վորքան լինելը. որինակ՝ յերկու բաժակ, չորս մետր, հարյուր մարդ, տասներկու գրիչ:

բ. Դասական ածական, վոր ցույց են տալիս, թե առարկան վորեվե շարքում քանիերորդ տեղն ե բռնում. որինակ՝ յերրորդ հարկի չորրորդ սենյակը, հինգերորդ շարքի յերկրորդ նստարանը:

ԿԱՆՈՆ 15. Դասական ածանցն ե բՈՂ, վոր ավելա- նալով քանակական թվականների վրա՝ ստացվում ե՝ յերկ- րորդ=յերկրորդ, յեր-րորդ=յերրորդ, չոր-րորդ=չորրորդ, հենգ-ե-րորդ=հինգերորդ, այսպես նաև՝ վեցերորդ, յոթնե- րորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնևեկերորդ, քսաներորդ և այլն:

ՎՈՐՈՇՈՒՄ 36. Առարկայի անորոշ քանակ ցույց տվող ածականները կոչվում են անորոշ ածականներ. որի- նակ՝ շատ մարդիկ, միքանի մարդ, քիչ հաց, սակավ ջուր, բավականին պաշար, վորեվե գիրք, բոլոր գրքերը և այլն:

ՎՈՐՈՇՈՒՄ 37. Այն անորոշ ածականները, վորոնք հարցականով են գործածվում, հարցական ածական են կոչվում. որ՝ քանի՞ գիրք, վո՞րքան ժամանակ, ի՞նչպիսի սենյակ, քանի՞երորդ սենյակը և այլն:

ՎՈՐՈՇՈՒՄ 38. Յուցական դերանունները (տե՛ս վո- րոշում 28) դրվելով առարկայի անվան վրա՝ ցուցական ածականների նշանակութ յուն են ստանում. որ՝ այս գիրքը, այդ գրիչը, այն տետրակը:

ԿԱՆՈՆ 16. Այն գոյականը, վոր ցուցական ածական ունի, վերջից ր կամ և հոդն ե ընդունում, որինակ՝ այս գիրքը, այդ գիրքը, այն գիրքը (տես կանոն 4):

Յո՛ւց տվեք ածականները:

1. Յեկան, սահեցին հանկարծ փողոցի ամառվա փոշում— բյուրավոր բանակներ անահ— զրահապատ բանակներ ուժի:

Շողացին սվիններ, սրեր,—
յերգեցին կրծքեր հզոր—
դրոշներ ծփացին արնավառ—
դրոշներ՝ կարմիր, բոսոր...

(Կարմիր Արև, «ԱՄԵՆԱՊՈՆԵՄ»)

2) Բարձրաբերձ սարերն ի վեր սողաց իժը ու փովեց
աչնտեղ խոնավ կիրճի մեջ և կծիկ դարձած՝ դիտում եր
ծովը: Բարձր լեռնակամարի վրա փայլում եր արևը, ու
լեռները տոթազին շնչում ելին լեռկինքն ի վեր, և ցածրում
ալիքները զարնում ելին ամրակուռ քարին... գլխովին ճեր-
մակ փրփուրի փոխված, ալեգարդ-հուժկու, ճեղքում եր
սարը և ծովը թափվում՝ ցասկոտ կականով:

(Կարմիր Արև, «ԲԱԶԵՅԻ ՅԵՐԳԸ»)

3. Հազար ու հազար արնոտ լուսերով
ջահերն են վառվում սև դաշտերի մեջ.
բոցավառ նավթը հուր կաթիլներով
թափվում է գետին,
գետինը ներկում դեղին ու կարմիր
և նարնջագույն փայլուն բծերով:
Ջահերի շուրջը
մկանուտ, հուժկու բազուկների մեջ
ցցվել են ահա ալ-կարմիր ու սև
դրոշակների յերկայն ձողերը:

(Կարմիր Արև, «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ»)

§ 36. Մեր դասարանն ավելի մեծ դասարան է, քան
ձեր դասարանը: Այս դասարանը դպրոցում ամենամեծ
դասարանն է: Ավելի մեծ, ամենամեծ — հատկության աս-
տիճաններ են ցույց տալիս:

ՎՈՐՈՇՈՒՄ 39. Հատկության աստիճանները յերկու
յին:

ա) Բաղդասական, յերբ հատկությունը համեմատվում
է մի այլ առարկայի հատկության հետ յեվ մեկի մեջ ա-
վելի կամ պակաս և նկատվում: որ՝ ավելի լավ, ավելի
վատ, ավելի մեծ, պակաս խելոք:

բ) Գերազրական, յերբ համեմատության մեջ մի ա-
ռարկայի հատկությունը գերազանցում է այդ առարկայի
հետ հատկությամբ համեմատվող ընդ որ առարկաների հատ-
կությունը. որ՝ ամենալավ (ամենից լավ), ամենավատ
(ամենից վատ) և այլն:

Յերբ առարկայի հատկությունը չի համեմատվում և
չի սաստկացվում, ածականը դրական աստիճան է դր-
վում:

Յերբ առարկայի հատկությունը բարձրացվում կամ
իջեցվում է առանց համեմատության, հատկության աստի-
ճանը սաստկական է կոչվում. որ՝ խիստ ցուրտ, չափա-
զանց տաք:

ԿԱՆՈՆ 17. Գերազրական աստիճանն արտահայտող
բարդ բառերի յերկու բաղադրիչ մասերը (ամեն բառով
բարդված) միասին են գրվում, իբրեվ մի բարդ բառ. որ՝
ամենալավ, ամենամեծ. բաց՝ ամենից լավ, ամենից մեծ:

ԿԱՆՈՆ 18. Յերբ գերազրական աստիճանն արտահայ-
տող բարդության առաջին բաղադրիչ մասը (ամեն) դրվում
է ծայնավորով սկսվող բառի վրա, հակառակ հողակապի
սովորական կանոնի (տես կանոն 9) և հողակապ դրվում
է. որ՝ ամենաազնիվ, ամենախմաստուն, ամենաուրախ,
անենաընդունակ և այլն:

§ 37. Յես յերեք տեսակի մատիտ ունիմ՝ սև, կար-
միր և կապույտ: Ամենից շատ սեվով եմ գրում. կարմիրով
ու կապույտով նկարում եմ: Այսոր կարմիր մատիտով
վարդ նկարեցի, իսկ կապույտ մատիտով՝ մանուշակ:

ՀԱՐՑ. Յերբ են ածականները հորովվում, յերբ չեն
հորովվում:

Ի՞նչպես են հորովվում ածականները:

ՎՈՐՈՇՈՒՄ 40. Յերբ ածականները գրվում են գո-
յականի հետ, անփոփոխ են մնում (բարի մարդ, բարի
մարդու, բարի մարդկանցից). յերբ գոյականը գեղջվում

ե, չի դրվում, նրա ածականը, գոյականաբար գործածվելով ու համապատասխան հոդ ընդունելով (ս, դ, և(ը)), հորովվում է (բարի, բարու, բարիներից.—կարմիրս, կարմրիս, կարմիրներիցս):

Ածականների հորովումը նման է գոյականների հորովման:

Դ. Բ Ա Յ

§ 38. 1. Մայրս վերջին անգամ գրկեց ինձ, համբուրեց և ասաց

— Գնա՛ս բարով...

Հայրս չհամբուրեց... Յես գնում եյի մի արդյունաբերական քաղաք, ուր ձգտում եյին ամենքը:

(Կարմիր Արև, «ԴԵՊՐ ՊԱՆԴԵՏՈՒԹՅՈՒՆ»)

Գրկեց, համբուրեց, գնաս, գնում եյի... բայեք են:

2. Յես նկարում եմ, դու կարդում ես, իսկ Միրուշը խաղում է: Փոքրիկ Վաչիկն հիվանդ է. նա պառկած է անկողնում:

ՎՈՐՈՇՈՒՄ 41. Բայ կոչվում են այն ըստերը, վորոնք ցույց են տալիս, թե այս կամ այն առարկան ի՛նչ է անում, ի՛նչ է լինում, ի՛նչ դրուծյան մեջ է: Ուրեմն, բայերը գործողություն կամ դրուծյուն են ցույց տալիս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36. Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցե՛ք բայերը.

Լուսը դեռ նոր էր բացվել, չերբ չես ընից արթնացա, գզեսաներս հագա ու լվացվեցի: Թեչը պատրաստ էր: Նախաճաշեցի, գրբերս վերցրի, քայերս դեպի դպրոց ուղղեցի: Աշակերտները խաղում եյին բակում: Մպասում եյի, վոր գանգը հնչի, վորից հետո դասարան հավաքվելիք, ուսուցիչը գար, պարապմունքն սկսվեր:

§ 39. 1. Յեկավ վիթխարի ծերունի մի մարդ, կանգնեց, վրդովված տղերանց միջին, մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ՝ եսպես նա պատմեց, զոռ տալով չիբխին...

2. Ես վոր լսեցին, դես ու դեն ցրված տղեքը ճեպով ձորը ներս մտան ու մտի տակին, ճամբիցը ծոված, յերկու մարդու թարմ վոտնատեղ գտան:

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՇ»)

ՎՈՐՈՇՈՒՄ 42. Բայերը յերկու թիվ ունեն—յեզակի յեվ հոգնակի: Յեզակի բայը ցույց է տալիս մի առարկայի կատարած գործողությունը կամ դրուծյունը, հոգնակի բայը՝ մեկից սովելի առարկաների:

§ 40. Յես գրում եմ. դու գրում ես. նա գրում է: Մենք կարդում ենք. դուք կարդում եք. նրանք կարդում են:

ՎՈՐՈՇՈՒՄ 43. Յես (ինքս), դու (ինքդ), նա (ինքը), մենք (ինքներս), դուք (ինքներդ), նրանք (ինքները) բառի արտահայտած դեմքերն են:

Յես—առաջին դեմք կամ խոսողը.

դու—յերկրորդ դեմք կամ խոսակիցը.

նա—յերրորդ դեմք կամ վոչ խոսողը և վոչ խոսակիցը:

Մենք—առաջին դեմք խոսողը և իր հետ չեղածները.

դուք—յերկրորդ դեմք կամ խոսակիցը և նրա հետ չեղածները.

նրանք—յերրորդ դեմք կամ վոչ խոսողները և վոչ խոսակիցները:

§ 41. Աշակերտը կարդում է (այժմ, խոսելու ըուպելին):—Աշակերտը կարդում էր, կարդալու չեր, կարդացել էր, կարդացած էր, կարդաց, կարդար, կկարդար, պիտի կարդար (անցյալում, խոսելու ըուպելից առաջ):—Աշակերտը կարդալու չե, կարդա, կկարդա, պիտի կարդա (հետագայում, խոսելու ըուպելից հետո):

ՎՈՐՈՇՈՒՄ 44. Բայի արտահայտած գաղափարներից մեկն է նայել ժամանակը, վոր ցույց է տալիս, թե ըստի յեղեղութունը յե՛րը է կատարվում:

Բայը յերեք ժամանակ ունի.

1. **Ներկա ժամանակ**, վորը ցույց է տալիս, թե ըստի յեղեղութունը կատարվում է խոսելու ընդհանր (կարգում էմ, գրում ես):

2. **Անցյալ ժամանակ**, վոր ցույց է տալիս, թե ըստի յեղեղութունը խոսելու ընդհանր առաջ է կատարվել կամ առաջ եր կատարվում (յես գնացի, գնում ելի):

3. **Ապառնի ժամանակ**, վոր ցույց է տալիս, թե ըստի յեղեղութունը խոսելու ընդհանր հետո յե կատարվելու (գնալու յեմ, գնամ, կգնամ, պիտի գնամ):

Բայերը փոփոխվում են դեմքով, թվով, ժամանակով:

Ցույց տվեք ըստերի ժամանակները հետեվյալ հատվածներում.

1. Ամպի տակից ջուր է գալիս,
դռն է տալիս, փրփրում,
են սև յարն է նստած լալիս
հոնգուր-հոնգուր են սարում:

2. Ուռին
աղջիկ եր ինձ պես,
մնում եր յարին,
ու չեկավ նա տես...
Խեղճը դողալով՝
անհույս կռացավ,
դարդից չարացավ,
ուռնի դարձավ:

3. Յես կվառվեմ, հուր կգառնամ,
յես կհալվեմ, ջուր կգառնամ:

(Կարմիր Արև, «ԱնՈՒՇ»)

§ 42. 1. Արամ, առավոտյան շուտ վե՛ր կաց, լվաց-
վի՛ր, նախաճաշդ արա՛, վերջը՛ն մեր զամբյուղը և գնա՛

շուկա. ճաշի համար անհրաժեշտ մթերքները գնի՛ր, տուն
ընր. ճանապարհին մի՛ ուշանա, սրահ-նրահ հետ յերկար մի՛
խոսի: Հետո Շուշիկի հետ գնացե՛ք դպրոց, դասից յերբեք
մի՛ ուշանաք, դասից հետո տուն վերադարձեք: Գալիս,
լրագրի այսորվա համարը վերցրե՛ք: Ասածներս մի՛ մոռա-
նաք, ճշտությամբ կատարեցե՛ք:

2. Վոչխարդ են սարով
տո՛ւտ տուր, տո՛ւն արի,
փախի՛ր դեռերով
ու թաքուն արի՛...
(Կարմիր Արև, «ԱնՈՒՇ»)

3. Ընկեր բանվորներ, բա՛ց արե՛ք ձեր աչքերը, նայեցե՛ք
ձեր շուրջը, գոնե մի հայացք գցեցե՛ք այս քաղաքի փողոցների վրա:
(Կարմիր Արև «ԿԱՊԻՏԱԼԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»)

4. Զա՛րկ, թմբուկ, զա՛րկ ուժգին, փչի՛Ք, փող, ժեփոփի՛ր,
ճե՛րս քափվ ե՛ք դռներից ինչպես գործ մուկին
յեկեղեցին—նեռացե՛ք, աղոթողներ,
դպրոցները—նեռացե՛ք, աշակերտներ:
(Կարմիր Արև «ԶԱՐԿ, ԹՄԲՈՒԿ»)

Այս հատվածների մեջ բոլոր բայերը հրամայական յեղանակով են դրված:

ՎՈՐՈՇՈՒՄ. 45. Հրամայական յեղանակը ցույց է տալիս, վոր խոսողը խոսակցին հրամայում է կամ հորդորում մի ըսն անելու կամ չանելու. վերջին տեսակի հրամայականը (մի խոսի կամ մի խոսիր) արգելական հրամայական է կոչվում:

Հրամայական յեղանակն ունի յեզակի յեվ հոգնակի թիվ ու միայն մի դեմք (2-րդ դեմք կամ խոսակիցը), վորովհետե՛վ հրամայել կարելի յե միայն խոսակցին կամ խոսակիցներին:

ԿԱՆՈՆ 19. Հրամայական յեղանակով արտահայտված ըստի վերջին վանկի ծանալորի վրա շեշտ է դրվում. որ. գնա՛, ստացի՛ր, հարցրո՛ւ:

ԿԱՆՈՆ 20. Արգելական հրամայականի շեշտը դրվում է արգելական մի բառի ձայնավորի վրա. որ՝ մի գնաս, մի ստանա, մի հարցնի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37. Հետեվյալ նախադասությունների բայերը փոխեցնելը հրամայական լեզանակի ու զրի առե՞ք. որինսակ՝ գնաս, զիրքս բերես—գնաս, զիրքս բեր:

ա) Այս նամակը կարդաս:—Գնաս, ինձ համար ջուր բերես:—Մի գնաս, Արամին տեսնես և այս զիրքը նրան տաս:

բ) Այս շերը ցնես ու բերանները փակես:—Այդ մասին Արշակին մեկ հարցնես:—Փողն ինքզ ստանաս ու ինձ բերես:

գ) Կուտես ու համը կտեսնես: Կգաս ու կիմանաս: Այս բանը կանես ու կբառնաս: Կգնես այնտեղ, կթողնես ու կգաս: Կփախցնես, կբերես:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38. Հետեվյալ նախադասություններում հրամայական բայերը փոխեցնելը արգելական հրամայականի ու զրի՛ առեք: Որ՝ նամակն ստացիր և ինձ բեր—նամակը մի ստանա և ինձ մի բերի: Սեղանը մոտեցրու պատին:—Հարցրու և իմացիր պատճառն ու ինձ ասա:—Նստիր և դասերդ պատրաստիր: Վեր-վեր թռիր ու ձայն տուր:—Կորիր այստեղից:—Փախիր շուտով: Սառիք ցրտից:—Կեր ու կշտացիր: Կարգս ու մարդ գարձիր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39. Հետեվյալ նախադասություններում հրամայական բայերը փոխեցնելը արգելական հրամայականի՝ վոչ բառը բայերի վրա գնելով. որ՝ կեր ու կըշտացիր,—վոչ կեր, վոչ կշտացիր կամ վոչ կեր, վոչ ել կշտացիր:

Ա ու գնա: Հստիր, տես, ստացիր ու բեր: Գրիգորին ել ասա, Տիգրանին ել, Հովհաննեսին ել: Հաց ել կեր, գործդ ել արա: Արամ, մոտեցրու, վրան բարձրացիր, նկարը պատին կանխ տուր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40. Գտեք հետեվյալ բայերի հրամայականը յեվ արգելականը:

Գնալ, մնալ, կարդալ, գրել, սրել, չերգել, նկարել, զարմանալ, ստանալ, մեծանալ, հպարտանալ, կոտորատել, ջարդոտել, փշրտել, մոտեցնել, հարցնել, կորցնել, փախցրնել, թռչել, թոցնել, սառչել, սառցնել, տեսնել, հասնել, մտնել, չնել, տանել, ուտել, կարգացնել, կոտրվել, հագնվել, սանրվել, գալ, տալ, լալ, պար գալ, թափ տալ, սիրտ անել, վեր կենալ, ականջ գնել, ծափ տալ:

§ 43. 1. Այս շենքի բարձրությունը մոտավորապես հինգ մետր կլինի. չերկարությունը տասնհինգ մետր կլինի: Այս շենքի դահլիճը հարյուր հիսուն մարդ կտանի: Մեր ընթերցարանում մեր բոլոր լրագրերը կգտնես:

2. Ձեզ կհայտնեն ու կծաղրեն, կատեն օւ կհալածեն, ձեզ համար մտրակներ, դնդակներ ու բանտեր կաւտրաստեն:

(Կարմիր Արև, «ԿԱՊԻՏԱԼԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»)

3. Գլխատուխյան մռայլ ժամին գլուխդ վայր կբերես, և զանգերը կողզանջեն, և դաշույնը կփաղփաղի, ու մկանունք կաղաղակեն, և կլինի շքեղ հանդես, մեծապայծառ տոն ու հանդես կարմիր արյան և մետաղի:

(Կարմիր Արև, «ԳԼՈՒԽԸ»)

Այս հատվածներում բայերը դրված են յենթադրական չեղանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 46. Յենթադրական լեզանակը ցույց է տալիս, վոր խոսողը բայի լեզելություն մասին յենթադրաբար է արտահայտվում, յենթադրում է կամ կասկած է հայտնում:

Յենթադրական չեղանակով դրված բայը միշտ ապառնի չե և ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ: Ապառնի ներկան ցույց է տալիս մի չեղելություն, վոր ներկայի նկատմամբ ապառնի չե. որ՝ նա կգնա: Ապառնի անցյալը ցույց է տալիս մի չեղելություն, վոր անցյալի նկատմամբ

ապառնի յե. որ.՝ նա կգնար: Յենթադրականը բոլոր դեմքերն ել ունի:

ԿԱՆՈՆ 21. Յենթադրականի վրա դրվող կ-ն ընդունված է բային կպած գրնլ—կգնա, կասի:

Պ Ա Տ Կ Ե Ր

Յենթ. ապ. ներկա

Յենթ. ապ. անցյալ

Յեա կասեմ	մենք կասենք	յես կասելի	մենք կասելինք
դու կասես	դուք կասեք	դու կասելիր	դուք կասելիք
նա կասի	նրանք կասեն	նա կասեր	նրանք կասելին

ԿԱՆՈՆ 22. Յենթադրականի բացասական ձևը կազմելու համար գործ են ածվում վոչ, չ. որ.՝ վոչ կգնամ և վոչ կասեմ կամ՝ չեմ գնա և չեմ ասի:

§ 44. Դուք բոլորդ վաղը դպրոց պիտի գաք: Դպրոցի ճակատը զարդարված պիտի լինի: Ամենքս կարգ պիտի կանգնենք: Բոլորս պիտի մասնակցենք տոնական թափօրին: Վոչ վոք չպիտի բացակայի: Վոչ պիտի խոսեք, վոչ շարքից դուրս գաք, վոչ իրար հրեք: Որինակելի կարգապահութուն պիտի լինի: Թափօրն առավոտյան ժամի տասին պիտի սկսվի:

Այս հատվածում բոլոր բայերը գրված են հարկադրական յեղանակով:

ՎՈՐՈՇՈՒՄ 47. Հարկադրական յեղանակը ցույց է տալիս, վոր խոսողը յեղելության մասին խոսում է իբրեւ սնհրածեշտության կամ մի անհրաժեշտ բանի մասին, կամ անհրաժեշտ ու ստիպողական է գտնում, վոր բայի յեղելութունն այս կամ այն կերպ լինի:

Հարկադրական յեղանակով գրված բալը միշտ ապառնի յե և նույնպես ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ ձևերը. որ.՝ յես պիտի գնամ. յես պիտի գնայի.—յես չպիտի գնամ. յես չպիտի գնայի:—Յեա վոչ պիտի գնամ և վոչ ել

պիտի տեսնեմ.—յես վոչ պիտի գնայի և վոչ ել պիտի տեսնելի.—Ունի բոլոր դեմքերը:

ԿԱՆՈՆ 23. Հարկադրական յեղանակի վրա դրվում է պիտի կամ պե՛ս է բառերից մեկն ու մեկը. իսկ յեթե բայը բացասական է, այդ դեպքում՝ չպիտի կամ չպե՛ս է. որ.՝ չպիտի գնամ, չպետք է գնամ. կարելի չէ նաև՝ պիտի չգնամ, պետք է չգնամ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41. Կազմեցն'ք ինքներդ հարկադրական ապառնի ներկայի յեվ հարկադրական ապառնի անցյալի խոնարհման պատկերը, թե դրական յեվ թե բացասական:

§ 44. 2. Աշտ, գնաս Ունիկի մոտ, ասես՝ դիրքը տա, վոր դասս պատրաստեմ. թե դու չկարողանաս, խնդրեմ Մինասին ասես՝ նա բերի. դե, սիրելիս, չմոռանաս, միտղլով պահես: Բան է՝ թե Մինասին ել շտեսնես, ինձ իմաց անես:

- 2. Կորչեմ բեգար, դադարդուն,
- քար-սարեսար, դադարդուն,
- մեռնեմ, պրծնեմ ես որից,
- բալքի առնեմ դադար, քուն:
- ... վայ թե հանկարծ իմանա,
- յես ազատվեմ ես ցավից,
- աչքը լալով նա մնա:

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՇ»)

Այս հատվածում բայերը գրված են ըղձական յեղանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 48. Ըղձական յեղանակը ցույց է տալիս, վոր ասողը կամ խոսողը ցանկանում է՝ այս կամ այն յեղելութունը կատարվի, լինի. ըղձականն իր նշանակությամբ հակառակ է հրամայական յեղանակին. որ.՝ ըղձական—գնաս՝ ջուր բերես, հրամայական՝ գնա, ջուր բեր:

Ըղձական յեղանակն ունի ապառնի նշանակութուն և չերկու ձև՝ ըղձական ապառնի ներկա, ըղձական ապառնի անցյալ (որ.՝ գնամ, գնայի): Ունի բոլոր դեմքերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42. ա) Ինքներդ կազմեցե՛ք ըղձական ապառնի ներկայի յեվ ըղձական ապառնի անցյալի լրիվ պատկերը, վորեվն ըայ վերցնելով իբրեվ որինակ-ձեր կազմած պատկերը զրի՛ առեք:

բ) Յուչց տվեք, թե ըղձական, լենթադրական և հարկադրական լեղանակների մեջ ձեվական յեվ իմաստի ինչ տարբերութուններ կան (որ.՝ տաս ուրբլի լինի, տաս ուրբլի կլինի, տաս ուրբլի պիտի լինի):

գ) Կազմեցե՛ք վորեվն ըայի ըացասական ըղձականի պատկերը՝ չ, վոչ ավելացնելով այդ ըայի վրա:

Ըղձականի վճր ձևն է գործածված հետևյալ վոտանավորներում.

1. Ա՛խ, յես յերանի
կայծակ լիճեյի,
վորոտ—ձայթյունով
մոայլ ամպերից
ժայթեյի ըմբոստ,
գարկեյի ուժգին,
պատռեյի խավար
կամարը յերկնի...

(Հովհ. Թում. «ԲԱՆԱՍՏ».)

2. Կուզեյի՛ հնգեք իմ փողն ահարկու,
քնդացներ սրտեր յուր ձայնով հուժկու,
քնածը զարթներ, թուլյն աբխանար՝
կովելու մինչ մահ՝ սուրբ գործի համար:

(Հովհ. Հովհ. «ԲԱՆԱՍՏ».)

§ 45. Այսոր արևը պայծառ ժպտում է. ամեն ինչ վորողված է նրա շողերով: Առավոտյան դեռ շատ վաղ վեր եմ կացել. ահա նախաճաշում եմ, վորից հետո զնալու յեմ դպրոց: Ժամի լոթը խփեց: Քալերս ուղղում եմ դեպի դպրոց:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական լեղանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 49. Սահմանական լեղանակը ցույց է տալիս, վոր ասողը լեղելության մասին խոսում է իբրեվ իրական, ճիշտ մի բանի մասին: Այդպիսով, սահմանական լեղանակը խիստ տարբերվում է ըլսոր մյուս լեղանակներից, վորոնք կամ յենթադրութուն ու կասկած, կամ անհրաժեշտութուն, կամ ցանկութուն յեվ կամ հրաման են արտահայտում:

§ 46. Յես կարդում եմ, դու գրում ես, նա նկարում է: Մենք կարդում ենք, դուք գրում եք, իսկ նրանք նկարում են:

2. Անլուելի վեպում է
պղտոր ջուրը Դեբետի,
նրա ափին կանաչում է
մենակ շիրիմն իգիթի...
Ու հոսում է գիշեր-ցերեկ
արցունքն անբախտ աղջկա,
բայց իր սիրած տղան յերբեք
չկա՛, չկա՛ ու չկա՛...

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՇ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական լեղանակի ներկա ժամանակ (անկատար կամ բուն ներկա):

ՎՈՐՈՇՈՒՄ 50. Անկատար ներկան (կամ բուն ներկան) ցույց է տալիս մի լեղելութուն, վոր տեղի յե ունենում խոսելու ըոպեյին յեվ դեռ շարունակվում է: Ունի ըլսոր դեմքերը:

ԿԱՆՈՆ 24. Անկատար ներկայում՝ եմ, ես, է, ենք, եք, են—միշտ առանձին են գրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43. Ինքներդ կազմեցե՛ք վորեվն ըայի անկատար ներկայի պատկերը, ըրական յեվ ըացասական:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44. Գտե՛ք հետեվյալ ըայերի անկատար ներկան.

- Խոսել, տանել, նստել, նստեցնել, հարցնել, փախչել, փախցնել, ուտել, գալ, տալ, լալ, շարդվել, կտրվել, թափ տալ, պար գալ, սիրտ անել, լինել:

§ 47. 1. Յես գնում եյի դպրոց, դու գալիս եյի՞ր դեպի առն. Աշտը բեզ հետ եր: Մենք գնում եյինք, դուք գալիս եյիք, նրանք յերգում եյին:

2. Նստում եր Հասոն ժայռերի գլխին: Յեվ նվագում եր: Վոչխարները լսելուն պես՝ թողնում եյին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս, Հասոյի շուրջը հավաքվում:

(Կարմիր Արև, «ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ»)

3. Կեսորվա ժամի մեկն եր: Ճաշի գնացած բանվորներին ճշտապահ շվին նորից գործի յեր կանչում...

Բանվորները խուճբ-խուճբ քայլում եյին դեպի գործարանը, մի պահ խոնվում դարպասի առաջ ու, ներս մտնելով, ցրվում ամեն մեկն իր տեղը:

(Կ. Ա. «ՄԱՐՏԱԿՈՉ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի անկատար անցյալ ժամանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 51. Անկատար անցյալը ցույց ե տալիս մի յեղելութուն, վոր սկսված ե յեղել անցյալում (խոսելու ըոպայից առաջ) յեվ չի վերջացել: Ունի բոլոր դեմքերը:

ԿԱՆՈՆ 25. Անկատար անցյալում՝ եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյին—միշտ առանձին են գրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45. Ինքներդ կազմեցե՛ք վորեվ բայի անկատար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական:

§ 48. Մեր կոլլեկտիվի վորոշման համաձայն, վաղը մենք գնալու յենք եքսկուրսիա: Մեզ հետ լինելու յե մեր ուսուցիչը: Հետագոտելու յենք կաշվի գործարանը: Ուսուցիչը ցույց ե տալու և բացատրելու յե կաշի պատրաստելու ձևերը: Մեր եքսկուրսիան շարադրության նյութ ե լինելու:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի ապառնի ներկա ժամանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 52. Սահմանական յեղանակի ապառնի ներկան ցույց ե տալիս մի յեղելութուն, վոր խոսելու վայրկյանից հետո յե կատարվելու իբրեվ իրական մտադրութուն, վորոշում կամ համոզում, հակառակ յենթադրականի (տես § 25, վորոշում 45):

ԿԱՆՈՆ 26. Ապառնի ներկայում՝ յեմ, յես, յե, յեմք, յեք, յեն—առանձին են գրվում: Յ ավելանալու պատճառն այն ե, վոր նախորդ բառը վերջանում ե ծայնավորով (գնալու յեմ):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46. Ինքներդ կազմեցե՛ք վորեվ բայի ապառնի ներկայի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական:

§ 49. Յերեկվա վատ յեղանակի պատճառով մեր հետաձգած եքսկուրսիան լինելու յեր առավոտյան: Մասնակցելու յեր մեր ամբողջ կոլլեկտիվը: Բոլորս մեր հուշատետրերը վերցնելու եյինք մեզ հետ: Հետագոտելու եյինք կաշվի գործարանը և ապա շարադրության նյութ եյինք դարձնելու:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի ապառնի անցյալ ժամանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 53. Սահմանական ապառնի անցյալը ցույց ե տալիս մի յեղելութուն, վոր տեղի յեր ունենալու անցյալում իբրեվ իրական մտադրութուն կամ համոզում, վորը, սակայն, զանազան պատճառներով տեղի չի ունեցել: Ունի բոլոր դեմքերը:

ԿԱՆՈՆ 27. Ապառնի անցյալում՝ եյի, եյիր, յեք, եյինք, եյիք, եյին,—գրվում են առանձին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47. Ինքներդ կազմեցե՛ք անկասար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական:

§ 50. 1. Պետրոս, այսոր դասից ուշացել ես. զանգը վաղուց տվել ե. ընկերներդ հավաքվել են դասարան, ուսուցիչը ներս ե մտել, դասն սկսվել ե:

2. Յեւ գարերը, վոր անցել են մեր Նայիրյան փոշոտ ճամպով կարծես վոչինչ չեն հարցել զալիքների թափին տենդոտ.— անց են կացել նրանք խոժոռ ու չեն նայել յետև յերբեք ու բողել են հյուղեր փոշոտ ու սրտամաշ մշուշ ու մեզ, ու բողել են ժամեր անդեմ ու զանգերի յերազը ծեր, ու բողել են թռիչք անթև ու հողագույն դիմագծեր:

(Կարմիր Արև, «ԳՅՈՒՂԻ ՅԵՐԳԸ»)

3. Աստված ե մեռել, յերկինք ե փել, Յերկինքն ե նեղվել, թե՛ ուկիանոսն ե տեղահան յեղել:

(Կարմիր Արև, «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի վաղակատար ներկա:

ՎՈՐՈՇՈՒՄ 54. Վաղակատար ներկան ցույց ե տալիս մի յեղելություն, վոր ավելի վաղ ե կատարվել, քան խոսելու ըուպելին կատարվող մի ուրիշ յեղելություն (դու աչք գիրքը նոր ես կարդում, իսկ նա արդեն կարդացել ե):

ԿԱՆՈՆ 28. Վաղակատար ներկայում՝ եմ, ես, ե, եմք, եք, եմք—գրվում են առանձին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48. Ինքներդ կազմեցե՛ք վորեվե բայի վաղակատար ներկայի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական:

§ 51. 1. Արևը դեռ չեր ծագել, մեր կողեկախվը հասել եր սարի ստորոտը: Ընկերներից միքանիսն արդեն սարն եյին բարձրացել, տեղ եյին ընտրել:

2. Շները հալածել, խեղդոտել ելին նրան, անողորմ կերպով բզկտել նրա մորթին, մանուկները քարկոծ ելին արել:

(Կարմիր Արև, «ՓՈՂՈՅՈՒՄ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի վաղակատար անցյալ:

ՎՈՐՈՇՈՒՄ 55. Վաղակատար անցյալը ցույց ե տալիս մի յեղելություն, վոր խոսելու վայրկյանից առաջ ե կատարվել յեվ ավելի վաղ, քան անցյալում կատարվող վորեվե

ուրիշ յեղելություն (դու կարդում եյիր, իսկ նա արդեն կարդացել եր):

ԿԱՆՈՆ 29. Վաղակատար անցյալում՝ եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյինք—առանձին են գրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49. Ինքներդ կազմեցե՛ք վորեվե բայի վաղակատար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական:

§ 52. Մեր դպրոցի շենքն այսօր մաքրված ե, ամեն ինչ կարգի յե բերված: Դասարաններում պատերից նկարներ, քարտեզներ ու դիագրամներ են կախ տված: Դպրոցի մուտքի մոտ ազդ ե կպցրած՝ վոտքերը մաքրելու և ապա ներս մտնելու մասին:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի ճարակատար ներկա ժամանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 56. Հարակատար ներկան ցույց ե տալիս մի յեղելություն, վոր ավելի վաղ ե կատարվել, քան ներկայում կատարվող մի ուրիշ յեղելություն. բացի այդ, յեղելությունը հարատևում ե մինչեվ խոսելու վայրկյանը, (դու նոր ես նստում, իսկ նա արդեն նստած ե.— դու նոր ես քնում, իսկ նա արդեն քնած ե):

ԿԱՆՈՆ 30. Հարակատարի ած վերջավորությունը գրվում ե ծ-ով (գրած, գրված, ջարդած, ջարդված):

ԿԱՆՈՆ 31. Հարակատար ներկայում՝ եմ, ես, ե, եմք, եք, եմք—առանձին են գրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50. Ինքներդ կազմեցե՛ք վորեվե բայի հարակատար ներկայի խոնարհման պատկերը՝ դրական յեվ բացասական:

§ 53. Հրապարակի մեջտեղը շինված եր մի բարձր ամբիոն՝ ճառախոսների համար: Ահազին բազմութուն եր հավաքված: Շենքերի ճակատները զարդարված ելին կարմիր դրոշակներով, հեղափոխական գործիչների նկարներով, ծաղիկներով ու կանաչներով: Մենք կանգնած եյինք ամբիոնի մոտ:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանա-
կան լեզանակի նառակասար անցյալ ժամանակ:

ՎՈՐՈՇՈՒՄ 57. Հարակասար անցյալը ցույց է տա-
լիս մի յեղելություն, վոր անցյալում մի ուրիշ յեղելությունից
ավելի վաղ է կատարված, ըսցի այդ, հարատեվում է մինչեմ
անցյալի մի ուրիշ յեղելություն (դու չերեկ քնում եյիր,
իսկ նա արդեն քնած էր):

ԿԱՆՈՆ 32. Հարակատար անցյալում՝ եյի, եյիր, եր,
եյինք, եյիք, եյին — առանձին են գրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51. Ինքներդ կազմեցե՞ք վորեմբ բայի
հարակատար անցյալի խոնարհման պատկերը:

§ 54. 1. Դպրոցի դահլիճում տեղի ունեցավ աշխո-
հրդի ժողովը: Նախագահը կարդաց որակարգը, միքանի
լրացումներ յեղան: Յուրաքանչյուր հարց առանձին-առան-
ձին քննութան առարկա դարձավ: Բոլոր վորոշումները
քարտուղարն արձանագրեց:

2. Բակի լաչն դռները բացվեցին, կառքն ու ձին
անհետացան, ներս մտավ և ինքը՝ փան տերը, դռները
փակվեցին:

(Կարմիր Արև, «ՓՈՂՈՅՈՒՄ»)

3. Շոգենավը կես ժամի չափ կանգ առավ Հրդսնի
առջև: Շոգեշարժ նավակներով յեկան ինչ-վոր պաշտոնյա-
ներ, կատարեցին ինչ-վոր ձևականություններ: Այդ միջոցին
նայեցի դեպի ովկիանոս և զարմացա:

(Կարմիր Արև, «ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմա-
նական լեզանակի անցյալ կասարյալ:

ՎՈՐՈՇՈՒՄ 58. Անցյալ կատարյալը ցույց է տալիս
մի յեղելություն, վոր պարզապես խոսելու վայրկյանից ա-
ռաջ է կատարվել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52. Կազմեցե՞ք վորևէ բայի անցյալ
կատարյալի խոնարհման պատկերը՝ դրական և բացասական:

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՇՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

(Ընդհանուր պատկեր)

I ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

1. Անկասար ներկա

ուտում եմ
ուտում ես
ուտում ե
ուտում ենք
ուտում եք
ուտում են

—
չեմ ուտում
չես ուտում
չի ուտում
չենք ուտում
չեք ուտում
չեն ուտում

2. Անկասար անցյալ

ուտում եյի
ուտում եյիր
ուտում եր
ուտում եյինք
ուտում եյիք
ուտում եյին

—
չեյի ուտում
չեյիր ուտում
չեր ուտում
չեյինք ուտում
չեյիք ուտում
չեյին ուտում

3. Ապառնի ներկա

ուտելու չեմ
ուտելու չես
ուտելու չե
ուտելու չենք
ուտելու չեք
ուտելու չեն

—
չեմ ուտելու
չես ուտելու
չի ուտելու
չենք ուտելու
չեք ուտելու
չեն ուտելու

4. Ապառնի անցյալ

ուտելու եյի
ուտելու եյիր
ուտելու չեր
ուտելու եյինք
ուտելու եյիք
ուտելու եյին

—
չեյի ուտելու
չեյիր ուտելու
չեր ուտելու
չեյինք ուտելու
չեյիք ուտելու
չեյին ուտելու

5. Վաղակասար ներկա

կերել եմ
կերել ես
կերել ե
կերել ենք
կերել եք
կերել են

—
չեմ կերել
չես կերել
չի կերել
չենք կերել
չեք կերել
չեն կերել

7. Հարակասար ներկա

կերած եմ
կերած ես
կերած ե
կերած ենք
կերած եք
կերած են

—
չեմ կերած
(կամ կերած չեմ)
չես կերած
չի կերած
չենք կերած
չեք կերած
չեն կերած

9. Սնցյալ կասարյալ

կերա
կերար

6. Վաղակասար անցյալ

կերել ելի
կերել ելիր
կերել եր
կերել ելինք
կերել ելիք
կերել ելին

—
չեյի կերել
չեյիր կերել
չեր կերել
չեյինք կերել
չեյիք կերել
չեյին կերել

8. Հարակասար անցյալ

կերած ելի
կերած ելիր
կերած եր
կերած ելինք
կերած ելիք
կերած ելին

—
չեյի կերած
(կամ կերած չեյի)
չեյիր կերած
չեր կերած
չեյինք կերած
չեյիք կերած
չեյին կերած

չկերա
չկերար

կերավ
կերանք
կերաք
կերան

չկերավ
չկերանք
չկերաք
չկերան

II ԸՂԶԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

1. Ապառնի ներկա

Ուտեմ
ուտես
ուտի(ե)
ուտենք
ուտեք
ուտեն

—
չուտեմ
չուտես
չուտի
չուտենք
չուտեք
չուտեն

2. Ապառնի անցյալ

ուտելի
ուտելիր
ուտեր
ուտելինք
ուտելիք
ուտելին

—
չուտելի
չուտելիր
չուտեր
չուտելինք
չուտելիք
չուտելին

III ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

1. Ապառնի ներկա

կուտեմ
կուտես
կուտի(ե)
կուտենք
կուտեք
կուտեն

—
չեմ ուտի(լ)
չես ուտի
չի ուտի

2. Ապառնի անցյալ

կուտելի
կուտելիր
կուտեր
կուտելինք
կուտելիք
կուտելին

—
չեյի ուտի(լ)
չեյիր ուտի
չեր ուտի

չենք ուտի
չեք ուտի
չեն ուտի

չեցինք ուտի
չեցիք ուտի
չեցին ուտի

IV ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

1. Ապառնի ճերկա

Պիտի ուտեմ
պիտի ուտես
պիտի ուտի(ե)
պիտի ուտենք
պիտի ուտեք
պիտի ուտեն

չպիտի ուտեմ
(պիտի չուտեմ)
չպիտի ուտես
չպիտի ուտի(ե)
չպիտի ուտենք
չպիտի ուտեք
չպիտի ուտեն

2. Ապառնի անցյալ

պիտի ուտեցի
պիտի ուտեցիր
պիտի ուտեր
պիտի ուտեցինք
պիտի ուտեցիք
պիտի ուտեցին

չպիտի ուտեցի
(պիտի չուտեցի)
չպիտի ուտեցիր
չպիտի ուտեր
չպիտի ուտեցինք
չպիտի ուտեցիք
չպիտի ուտեցին

V ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

կեր կերեք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53. Արտագրեցե՛ք՝ դրական բայերը բացասական դարձնելով յեվ, ընդհակառակը, բացասական բայերը՝ դրական:

Որ՝ հարցրու Տիգրանին, նա քեզ կասի այդ մասին: Մի հարցնի Տիգրանին, նա քեզ չի ասի այդ մասին:

Ստացիր այդ գրութունը և Արշակին տար:—Միտք, գնաս՝ ջուր բերես:—Արամը չեկել է, արդյոք:—Նրան ենք սպասում:—Յեկել է, տեսել ու գնացել:—Թե տեսել է և թե հետը խոսել:—Վոչ կարդացել է, վոչ էլ միտքը հաս-

կացել:—Յես այդ բանը նոր եմ իմանում:—Գրիգորը գյուղ կգնար, չեթե կառք լիներ:—Յերանի գնալի և նրան տեսնելի:—Հերթը քոնն է, դու պիտի գնաս:—Վոչ Շուշիկն է չեկել, վոչ էլ Վարսիկը:—Մենք հաճախ տեսնում եցինք նրանց:—Գյուղը քաղաքից հեռու չե:—Նա կարոտ չի ոգնության:—Յեկ և այս բանը տես:—Յեթե գրադարան գնաս, այդ գիրքը կստանաս:—Լավ կանես, չեթե գնաս:—Մի փախցնի, այդ ի՞նչ է:—Մի հարցնի, պատասխանը չես ստանա:—Այդ տղան հինգ տարեկան կլինի:—Մեր գնացած ճանապարհը տաս կիլոմետր կլիներ:

Յո՛ւյց տվեք բայերը, խոսքերը լրացնելով.

Ոխտն աղբյուրից ջուր է առել,
կույս սափորով, լուռ ու մունջ,
ոխտը ծաղկից ծաղիկ քաղել,
կապել սիրո ծաղկեփունջ.
Ջուրն ու ծաղկունք աստղունք դրել,
խնդիրք արել աստղերին,
փափագ սրտով խնդիրք արել՝
բարի Ժպիտն իր սերին...

(Հովհ. Թումանյան, «ԱնՈՒՇ»)

ՀԱՐՅ.—Ի՞նչն է պակասում խոսքերի մեջ:

Ի՞նչ ժամանակ են դրված բայերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54. Արտագրեցե՛ք նետեվյալ նատվածը, ճերկա ժամանակը փոխելով անցյալ կասարյալի.

Որ՝ Արամը գնում է տուն, տեսնում է մորը:—Արամը գնաց տուն, տեսավ մորը:

Կույսը բացվում է: Փոքրիկ Սուրբիկը դարձնում է քնից, լվացվում է, նախաճաշ անելուց հետո, դպրոց է շտապում: Ճանապարհին պատահում է իր ընկերոջը՝ Հարածճի Լեկիկին. չերկուսը միասին, կատակներ անելով, գնում են դպրոց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55. Արտագրեցե՛ք նետեվյալ նատվածը, բայերի առաջին դեմքը յերրորդ դեմքի փոխելով.

Որ՝ չես վեր կացա և գնացի.— նա վեր կացավ ու գնաց:

Յես դեռ շատ փոքր ելի, չերբ առաջին անգամ ավտոմոբիլ ու չերկաթուղի տեսա: Հիշում եմ, թե վրձան զարմացա. չելի կարողանում հասկանալ նրանց շարժվելու պատճառը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56. Արտագրեցե՛ք հետեւյալ հատվածը, րդձական յեղանակը հրամայականի փոխելով:

Որ՝ այժ գիրքը տանես ու տաս նրան.— այժ գիրքը տար և տուր նրան:

Սուրբիկ, առավոտը շուտ վեր կենաս ու շուկա գնաս, ճաշի մթերքն ինքդ առնես, սուն բերես. ճանապարհին շուշանաս, սրահնրա հետ չխոսես, շուտ սուն դաս, մթերքները մալրիկիդ հասցնես:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57. Պատմեցե՛ք անցյալում աեղի ունեցած վորևե դեպք ներկա ժամանակով. ձեր պատմածը գրի առեք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58. Պատմեցե՛ք ձեր կենսագրությունը, շատ համառոտ և վաղակատար ներկայով (որ՝ չես ծնվել եմ...): Ձեր պատմածը գրի առեք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59. Պատմեցե՛ք անցյալում հաճախ կրկնվող մի բան (որ՝ չես ամեն որ գնում ելի լողանալու):— Ի՞նչ ժամանակով եք պատմում:— Նույնը պատմեցե՛ք անկատար ներկայով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60. Նկարագրեցե՛ք մեր դպրոցը, ձեր սուռնը, գյուղը, քաղաքը, ձին...: Առարկաների նկարագրության մեջ բայերն ի՞նչ ժամանակ եք դնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61. Ձեր գյուղում ի՞նչ առածներ եք լսել, ասացե՛ք. Ի՞նչ ժամանակներ են գործ ածվում այդ առածներում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62. Ձեր գյուղում ի՞նչ սովորություններ կան, պատմեցե՛ք. պատմածը գրի առեք:— Ի՞նչ ժամանակով եք պատմում ձեր գյուղի սովորությունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63. Ի՞նչ կուզեցիք դուք դառնալ, ասացե՛ք:— Ի՞նչ ժամանակով եք հայտնում ձեր ցանկությունները և ի՞նչ յեղանակով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64. Առողջապահական միջանի կանոններ շարադրեցե՛ք:— Բայերը ի՞նչ յեղանակ և ի՞նչ ժամանակ եք դնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65. Թվաբանական, չերկրաչափական... միջանի որենքներ ասացե՛ք:— Բայերը ի՞նչ յեղանակ և ի՞նչ ժամանակ եք դնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66. Բնութագրեցե՛ք ձեր կարգացած պատմվածքների հերոսներից մեկին:— Բնութագրության մեջ բայերն ի՞նչ ժամանակ եք դնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67. Սոնարհեցե՛ք՝ գնալիս լինել, գնալու լինել, գնացած լինել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68. Գտե՛ք ստորև հիշատակված բայերի յեղանակներն ու ժամանակները:

Յերեք շաբաթ կլինի, վոր նա հիվանդ պառկած ե:— Ասա նրան, վոր չես գնում եմ սուռն:— Գաս ինձ մոտ՝ խոսենք:— Կառք պիտի լինի, վոր գնամ:— Մենք միասին գնում ելինք, Գուրգենին հանդիպեցինք:— Դու գրում ես, իսկ չես արդեն գրել եմ:— Դու ուտում ելիր, իսկ չես արդեն կերել ելի:— Մայրը քնում ե, իսկ չերեխան արդեն քնած ե:— Դու հագնվում ելիր, իսկ չես հագնված ելի:— Մի կառք լիներ, աջտեղ գնալի:— Սահակը գնացած պիտի լինի:— Յերբ դու գալիս ես ինձ մոտ, չես գնացած եմ լինում:— Յերբ աչտեղ եմ հասնում, դու միշտ աչտեղով անցնելիս ես լինում:— Յեթե գնալու լինելի, կառք կկանչելի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69. Լրացրե՛ք հետևյալ բայերը՝ ստորև ցույց տված ձևով:

- | | | | |
|---------------|---------------|--------------|----------|
| 1. Անկ. ներկ. | 2. վաղ. ներկ. | 3. Անց. կաս. | 4. Հրամ. |
| Գնում եմ | գնացել եմ | գնացի | գնա |
| Ուտում եմ | կերել եմ | կերա | կեր |

1. Աճկ. ներկ.	2. Վաղ. ներկ.	3. Աճց. կատ.	4. Հրամ.
Տեսնում եմ	տեսել եմ	տեսա	տես
Հասնում եմ	»	»	»
Մտնում եմ	»	»	»
Իմանում եմ	»	»	»
Իմացնում եմ	»	»	»
Թռչում եմ	»	»	»
Փախչում եմ	»	»	»
Կորչում եմ	»	»	»
Գալիս եմ	»	»	»
Տալիս եմ	»	»	»
Փախցնում եմ	»	»	»
Կորցնում եմ	»	»	»
Կարդացնում եմ	»	»	»
Կարդալ եմ տալիս	»	»	»
Գրել եմ տալի	»	»	»
Սիրտ եմ անում	»	»	»
Գնալիս եմ լինում	»	»	»
Գնալու չեմ լինում	»	»	»
Գնացած եմ լինում	»	»	»
Առնում եմ	»	»	»
Չեմ ուտում	»	»	»
Չեմ մտնում	»	»	»
Չեմ փախչում	»	»	»
Սիրտ չեմ անում	»	»	»
Ճաշած չեմ լինում	»	»	»

- § 55 ա) 1. Այն աշակերտը, վոր կարդում եր, չեկավ:
 2. Կարդացող աշակերտը չեկավ:
 բ) 1. Այն նամակը, վոր գրեցիր, տուր:
 2. Քո գրած նամակը տուր:
 գ) 1. Այն գիրքը, վոր պիտի կարդաս, կբերեմ:
 2. Քո կարդալու գիրքը կբերեմ:

Կարդացող, գրած, կարդալու—դերբայներ են:

ՎՈՐՈՇՈՒՄ 58. Դերբայ կոչվում են բայի այն ձևերը, վորոնք ղեմք չունեն:

Դերբայները հետեվյալ վերջավորություններն ունեն.

ա) ալ, ել—կարդալ, գրել—այս դերբայը կոչվում է անորոշ դերբայ, վոր բայի գործողութան անունն է ցույց տալիս և գործ է ածվում իբրև բալանուն (գրել, գրելու, գրելուց, գրելով):

բ) ում, իս—կարգում, կարդալիս—անկասար դերբայ, վորից կազմվում են անկատար ներկան և անկատար անցյալը (գրում եմ, գրում ելի):

գ) ու, իք—գրելու, գրելիք—ապառնի դերբայ.—ու վերջավորութամբ ապառնի դերբայից կազմվում են սահմանական չեղանակի ապառնի ներկան և ապառնի անցյալը (գրելու չեմ, գրելու ելի). կարող է գործածվել իբրև բայածական (գրելու թուղթ), իսկ իք վերջավորութամբ ապառնի դերբայը գործ է ածվում կամ իբրև զոյական (չես գրելիք ունեմ—ինչ ունեմ) և կամ իբրև բայածական (իմ գրելիք նամակը):

դ) ած, ել—գրած, գրել, կարդացած, կարդացել.—ած վերջավորութամբ դերբայը կոչվում է հարակասար անցյալ դերբայ. նրանով կազմվում են հարակատար ներկան և հարակատար անցյալը (կարդացած եմ, կարդացած ելի). կարող է գործածվել իբրև ածական (կարդացած գիրք). ել վերջավորութամբ դերբայը կոչվում է վաղակասար դերբայ. նրանով կազմվում են վաղակատար ներկան և վաղակատար անցյալը:

ե) ող—գրող, կարդացող—յեթնակայական դերբայ. գործ է ածվում իբրև բայածական (կարդացող աշակերտը):

ՎՍԹՈՒԹՅՈՒՆ 60. 1. Բացատրեցե՛ք առ, ոս, ս

միջամանցների նշանակությունը հետեվյալ անորոշ դերբայների մեջ.

կտարել — կտարատել	նստել — նստոտել
կարել — կարատել	պտուկել — պտուկոտել
ջարդել — ջարդոտել	փշրել — փշրտել
ծակել — ծակոտել	պատուել — պատուտել:

2. Բացատրեցե՛ք ացն, եցն, ցն միջածանցների նշանակութիւնը հետեւյալում.

- | | |
|--------------------|--------------------|
| կարդալ — կարդացնել | մոտենալ — մոտեցնել |
| խաղալ — խաղացնել | կորչել — կորցնել |
| նստել — նստեցնել | փախչել — փախցնել: |

Վերոհիշյալ ձեւով անցեցե՛ք հետեւյալները.

Սոսել, իմանալ, սառել, հասնել, պրծնել, դառնալ, լալ, ուտել:

3. Բացատրեցե՛ք Վ միջածանցի նշանակութիւնը.

- | | |
|--------------------|--------------------------|
| կարել — կարվել | հեռանալ — հեռացվել |
| սպանել — սպանվել | ներկայանալ — ներկայացվել |
| տանել — տարվել | վերանալ — վերացվել |
| գողանալ — գողացվել | յուրացնել — յուրացվել: |

Ե. Մ Ա Կ Բ Ա Յ

§ 56. Բանվորներն արագ գործի կպան. բրիչներն ուժգին, շեշտակի մխվում ելին յերկրի կուրծքը:—«Հիմա կպրորենք»,—խրոխտ հնչեց մեկի շատ ուժեղ ձայնը:

Ուժգին, շեշտակի, հիմա, խրոխտ, շատ բառերը մակբայներ են:

ՎՈՐՈՇՈՒՄ 59. Մակբայ կոչվում են այն բառերը, վորոնք, քալի վրա դրվելով, ցույց են տալիս քալի գործողութիւնն զանազան պարագաները, այսինքն, թե քալի գործողութիւնը վորտեղ և կատարվում (տեղի պարագա), յերբ և կատարվում (Ժամանակի պարագա), ինչպես կամ ինչ կերպ և կատարվում (ձեւի կամ վորակի պարագա), ինչ չափով, վորքան, քանի անգամ և կատարվում (քանակի պարագա), ինչու համար, ինչ նպատակով և կատարվում (նպատակի պարագա), ինչու, ինչ պատճառով և կատարվում (պատճառի պարագա):

Ածականները, քալի վրա դրվելով, մակբայ են դառնում յեւ վորեւ պարագա յեն ցույց տալիս: Ածականն ածականի վրա դրվելով՝ նոյնպես մակբայ և դառնում, հատկութիւնն վորեւ աստիճան ցույց տալով (տես վորոշում 38):

Հայերենում ընդ մակբայներ շատ քիչ կան. պակասը լրացվում է ածականներով կամ տեղի, ժամանակի անուններով և չափ ու քանակ, նպատակ ու պատճառ արտահայտող բառերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61. Արտագրեցե՛ք յեւ ընդձեցե՛ք մակբայները:

1. Արդեն յերեկո յե. արևի հրավառ ճառագայթներն առատ սփռվել են լայնորեն տարածված դաշտավայրի վրա: Հրեղեն գունդն արագ դեպի իր մուտքն է դիմում: Յերկնքի վրա աստ և անդ յերևում են ամպի շատ փոքրիկ կտորներ՝ վերջալուսի շողերով առատորեն վողողված ու կարմիր ներկված:

2. Հողմերն են վոստի մեր գլխին ձախրում, ծանր ճնշում են ուժեր դժնդակ. վոստիների դեմ պայքար ենք մղում, մեր դիմաց դեռ կա մի անհայտ վիճակ: Սակայն, մենք խիզախ, բարձր կրունք մեծ բանվոր դասի դրոշմ կարմիր, դրոշմ կովի համայն մարդկութեան վսեմ մի կյանքի և ազատութեան:
(Կարմիր Արև, «ՎԱՐՇԱՎՅԱՆ ՅԵՐԳ»)

2. Կ Ա Պ

§ 57. Գնացքը Յերևանից մեկնեց դեպի Թիֆլիս:—Վաղարշապատից մինչեւ Յերևան տասնութ վերստ է:—Բոլորը յեկան, քացի Աննիկից:—Առողջ լինելու համար պետք է պահել առողջապահական կանոնները:

Դեպի, մինչեւ, բացի, համար—անփոփոխ բառեր են և կոչվում են կապ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62. Լրացրեք հետեւյալ նախադասութիւնները՝ փակագծերում դրած բառերը համապատասխան հոլով դնելով. որ՝ մենք այսօր մնացինք առանց... (հաց և ջուր)—մենք այսօր մնացինք առանց հացի և ջրի:

Մենք շատ ենք լսել... (Արամ) մասին:—Նա չեկավ աղբյուրից... (Ջուր տանել) համար:—Բոլորը կատարել են, բացի... (Արշակ, Մինաս, Վաչիկ):—Յես կանգնած եմ մի բարձր... (շենք) հանդեպ:—Ըստ այդ... (կարգադրութիւն), դու գլուղ պիտի մեկնես:—Սուրբիկը կովել ե... (Գրիգոր) հետ:—Նա նստեց... (աթոռ) վրա:—Յերեք անգամ... (գալ) հանդերձ, յես չկարողացա քեզ տեսնել:

ՎՈՐՈՇՈՒՄ 60. Կապ կոչվում են այն բառերը, վորոնք անփոփոխ են, դրվում են գոյականից առաջ կամ հետո յեւ այդ գոյականը իբրեւ լրացում կապում են բայի հետ: Գոյականից առաջ դրվող կապերը կոչվում են **ճախդիրներ**, իսկ գոյականից ճեսո դրվողները՝ **ճեսադիրներ**: Գոյականի այս կամ այն հոլով դրվելը կախում ունի նախդիր կամ հետադիր կապից:

§ 58. Մենք կանգնած ենք մի բարձր շենքի առաջ:—Գիրքն ընկել է սեղանի տակ:—Կանգնեց քո դիմաց:—Նա փախավ քո դիմացով:—Գիրքը վերցրու սեղանի տակից:—Նա փախավ սեղանի տակով:—Յես այնտեղ եյի կովի ժամանակ:

Առաջ, տակ, դիմաց, ժամանակ և այլն փոփոխվող բառերը (տեղի անուններ) կարող են գործ ածվել իբրև կապական բառեր, մի ուրիշ գոյականից հետո դրվելով:

§ 59. Մենք մնացինք առանց հացի և ջրի.—մենք անհաց և անջուր մնացինք:—Առանց վշտի—անվիշտ:—Առանց կամքի—անկամ—կամազուրկ:—Առանց սիրո—անսեր—սիրազուրկ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63. վերոհիշյալ ձեզով, ի՞նչպես կլինի՝ Առանց հանգստի... Առանց դադարի... Առանց արմուկի... Առանց զարգարանքի... Առանց ուրախության...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64. Արևը մտնելու ժամանակ—արևմտոցին:—Լույսը բացվելու ժամանակ—լուսաբացին:—Հավր խոսելու ժամանակ... Կայսելու ժամանակ... Յերկիրը շարժվելու ժամանակ... Որը մթնելու ժամանակ... Նահանջելու ժամանակ... Գոմեշները կովելու ժամանակ... Հորթերը թողնելու ժամանակ... Այգին քաղելու ժամանակ... Այգին թաղելու ժամանակ... Ծառեր տնկելու ժամանակ... Գարունը մտնելու ժամանակ... Ամառը, աշունը, ձմեռը մտնելու ժամանակ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65. Պատերազմից առաջ—նախապատերազմյան, հեղափոխութիւնից առաջ—մինչ-հեղափոխական, —ջրհեղեղից առաջ... մարդուց առաջ... պատերազմից հետո—հետ-պատերազմյան, — հեղափոխութիւնից հետո...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66. Ըստ այդ կարգադրության—այդ կարգադրության համաձայն:—Ըստ Լուսժողովմատի կարգադրության... Ըստ Ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետի... Ըստ ԽՍՀՄ որենսդրության և ըստ կենսագործկոմի դեկրետի...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67. Տ'տեսութիւն—մինչև տեսութիւն:—Տ'այսօր... Տ'նոր կարգադրութիւն... Տ'այժմ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68. Նա գնաց մինչև հինգ կիլոմետր—հինգ կիլոմետրի շափ—շուրջ հինգ կիլոմետր:—Մինչև հինգ ուղբի... Մինչև յերեք ամիս... Մինչև մի ժամ... Մինչև տաս կիլոգրամ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69. Վերլուծելով հետեւյալ բառերի կազմութիւնը, ցո՛ւց տվեք նրանցում ընդ յեւ ըս նախդիրները՝ իբրեւ ըաղաղորիչ մասեր:—Ընդհանուր—ընդհանուր:—Ընդարձակ...—ընդգրկել...—անընդհատ...—որբտորե...—ընդհատակյա...—ընդծովյա...—մեջընդմեջ...

Է. Շ Ա Ղ Կ Ա Պ

§ 60. Արշակն ու Սուրբիկը սուեն գնացին:— Յես յեվ դու այնտեղ մնացինք:— Յես ե՛լ գնացի, դու ե՛լ գնացիր:— Թե՛ յես գնացի, թե՛ դու գնացիր:— Սուրբիկը յեկավ, ըայց քեզ չտեսավ:— Յես գալիս եմ, իսկ դու գնում ես:— Մենք հավաքվեցինք, վոր միասին աշխատենք:— Մենք կառաջադիմենք, յեթե աշխատենք:

Ու, յեվ, եւ, թե, ըայց, իսկ, վոր, յեթե բառերը շաղկապներ են:

ՎՈՐՈՇՈՒՄ 61. Շաղկապ կրչվում են այն բառերը, վոր կապում են բառ բառի կամ նախադասութուն նախադասութան հետ. որ՝ Արշակն ու Սուրբիկը սուեն գնացին նախադասութան մեջ Արշակն, Սուրբիկը բառերը կապված են իրար հետ ու շաղկապով: Յես գալիս եմ, իսկ դու գնում ես—այստեղ՝ յես գալիս եմ նախադասութունը դու գնում ես նախադասութան հետ կապված է իսկ շաղկապով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70. Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցե՛ք շաղկապները:

Վարդան, տար իմ գիրքը, բայց չուշացնես, վորովհետեւ ինքս ել դեռ չեմ կարդացել:— Յեթե գալիր, կստանալիր:— Նստենք ու խոսենք:— Թե դու և թե նա պետք է աշխատեք:— Գնանք, վոր բերենք:— Կամ դու պիտի գաս, կամ նա պիտի գա:— Ուշացար, ուստի և քեզ բաժին չհասավ:— Լավ չեմ զգում ինձ, սակայն պիտի աշխատեմ:— Արագ վագեցի, բայց և այնպես չհասա:— Կամաց գնացի, այնուամենայնիվ հասա:— Յերբ միասին ենք աշխատում, ավելի արդյունքի չենք հասնում:— Տուր այն գիրքը, վոր խնդրել եմ:— Կատարիր, ինչ-վոր քեզ ասել եմ:— Պատասխանատու կլինի նա, ով կխախտի կանոնադրութունը:— Գնա, ուր ուզում ես:— Յեկ, յերբ կամենաս:— Թեև հոգնած ելի, բայց և այնպես աշխատեցի:—

Նախ յեկանք, ապա գնացինք: Մասիսը կամ Արարատը մեզնից հեռու չի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71. Շաղկապներով կապված նախադասութունները փոխեցե՛ք ցույց տված ձևով (առանց շաղկապների) ու գրի՛ տեք:

1. Գնա՛ սուեն, վոր դատդ պատրաստես. — գնա՛ սուեն՝ դատդ պատրաստելու:

Յեկ մեր սուեն, վոր գիրքդ ստանաս.....
Կու՛մն աղբյուրը տարավ, վոր շուր բերի.....

2. Յես դասի չեկա՞ք վորովհետեւ հիվանդ ելի — յես դասի չեկա՞՞ հիվանդ լինելու պատճառով. կամ՝ հիվանդ լինելով, յես դասի չեկա՞:

Դու հանցավոր ես, վորովհետեւ այդ բանն արել ես.....
Սառուցը հալվեց, վորովհետեւ յեղանակը տաքացավ....

3. Մենք վեր կացանք, յերբ լույսը բացվում էր — լուսաբացին մենք վեր կացանք. կամ՝ լույսը բացվելիս, մենք վեր կացանք:

Յես վախենում ելի, յերբ ամպը գոռում էր.....
Դու յեկար, յերբ արևը մտնում էր.....

Մենք վեր թռանք, յերբ հրացանը տրաքեց.....

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72. Ինքներդ հորինեցե՛ք հետեվյալ ձևով կապակցութուններ յեվ փոխեցե՛ք առանց շաղկապի (ցույց տված ձևով). —

4. Այն մարդը, վոր ուրիշի աշխատանքով է ապրում, նա շահագործող է — ուրիշի աշխատանքով ապրող մարդը շահագործող է:

5. Յեկավ այն աշակերտը, վոր գնացել էր պուղ — պուղ գնացող աշակերտը յեկավ:

6. Ով գիրք չունի, նա չի կարող այդ պատրաստել — գիրք չունեցողն այդ պատրաստել չի կարող:

7. Ով չի աշխատում, նրա սուենը կքանդվի — չաշխատողի սուենը կքանդվի:

8. Ինչ վոր քամին բերում է՝ քամին էլ կտանի — քամու բերածը քամին կտանի:

Ը. ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 61. Ե՛ն, Գրիգոր, բավական եւ—Պա՛ պա՛ պա՛,
մեծ-մեծ մի խոսիր:—Վա՛յ, մի՛թե կարելի չեր այդ անել:—
Ամեն ինչ կորավ, ափսո՛ս:—Յես ի՛նչ գիտեմ, տո՛, թի՛ն
վորտեղ եւ:—Դե՛ն, բավական ե, գնանք:—Հապա՛, վեր կե-
նանք:—Դե՛, գործի կպչենք:—Զը՛նգ զը՛նգ, հնչեց զանգը:

Ե՛ն, պա՛ պա՛ պա՛, ափսո՛ս, տո՛, դե՛ն, դե՛, հապա՛, զը՛նգ
բառերը ձայնարկություններ են:

ՎՈՐՈՇՈՒՄ 62. Չայնարկություն կոչվում են այն
բառերը, վորոնք մի ձայնով կամ բացականչությամբ ցույց
են տալիս խոսողի զգացմունքը կամ կամքը կամ վորոնք
նմանաձայնութուն են արտահայտում:

ԿԱՆՈՆ 32 ա) Չայնարկությունների վրա դրվում ե
յերկար կամ բացազանչական նշան (˘), կամ շեշտ (˙):

բ) Չայնարկությունները նախադասության մյուս բա-
ռերից բաժանվում են ստորակետով, յեթե նախադասության
սկիզբը կամ վերջն են ընկնում յեվ ստորակետերով (սկիզ-
բից յեվ վերջից), յեթե նախադասության մեջն են ընկնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73. արտագրեցե՛ք յեվ ձայնարկու-
թյունների տակն ընդգծեցե՛ք.

Լեիկն ու Աշխենը դասամիջոցին կոոպերատիվ ելին
խաղում:

- Ե՛յ, Լեիկ, մի կիլո մեղր տուր:
- Ե՛, Աշխեն, փող ունի՞ս վոր:
- Տո՛, բա չունի՛մ:
- Պա՛, պա՛, պա՛, պա՛, ի՛նչ մեղր ե, հա՛. լազա՛թ:
- Վա՛յ, ափսո՛ս, ծոր տվեց գետին: Քշա՛, անտեր հավ,
բո ուտելու բանը չի:

Ճը՛նգ ճը՛նգ ճը՛նգ... — խփեց ժամի տասը:
Զը՛նգ զը՛նգ զը՛նգ... — խփեց դպրոցի զանգը:

— Դե՛ բավական ե, Լեիկ, —ասաց Աշխենը, — գնանք
դասի, հետո կոոպերատիվը կշարունակենք:

— Ուու՛, կեցցե՛ մեր կոոպերատիվը, — բացականչեց
Լեիկը՝ Աշխենի հետ գեպի դասարան վաղ տալով:



123

1927



11
24192

ԳԻՆԵԸ 50 ԿՈՊ.